

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ԵՄԲԼԵՄ ՕՐԵՐԸ: — Հա-
տը 40 փարա:

Բաժանորդագրին ԵՄԼԻԽԻԿ — Պոլսոյ Համար տարե-
կան 45 զրշ. վեցամսեայ 23 զրշ. եռամսեայ 12 զրշ. —
Գաւառացի Համար տարեկան 50 զրշ. վեցամսեայ 26
զրշ. եռամսեայ 14 զրշ.:

Ռուսիոյ Համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կրներու Համար 12 ֆրանք:

Գաւառեցիքն գրողն ընդ իր իշխանութիւնս:
Միայն երեք թիւ ապագայ կը գրուի. այնուհետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը դադրի թերթ ընդու-
նելէ:

Մանուցման տողը 2 զրշ.:

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿ Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՄԷՆ ԳՐԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ
Առ ՏԵՐԵԿ-ՀՐԱՄԱՐԱԿԻՆ 3042ԱՆ Գ. ՓԱՍՏԱՆԵԱՆ

Պոլիս, Լիւն-Պալմիէ. Պերպերեան Տպարան

درعليه ده اسكي ضبطيه زقاغنده بربريان مطبعه سنده

« زاعيك » غزتهسى مديرى پالاقشيان حووان

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻԻ 41

Շ Ա Բ Ա Թ

22 ՅՈՒՆԻՍ 1891

ԹԵՄՈՐԱՅԲ ԿԵՍԱՐԻՈՅ ՎԻՃԱԿԻՆ

Ե Ի

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՆ ԶԵՌԱԳԻՐԲ

—

Ա.

Կ Ե Ս Ա Ր Ի Ա

(Առաջնորդանիս)

Բնակիչք. — Թուրք, Հայ, Յոյն՝ բազմու-
թեան կարգաւ. Թուրքացի եւ Յունացի թիւն
առ այժմ չի կարողացայ ճշդել:

Հայ, 2500 տուն, 6850 այր, 6980 կին
Բողոք. Հայ 75 » 250 » 265 »
Գաթոլիկ » 50 » 175 » 200 »

Արհեստ Հայոց. — Վաճառականութիւն,
Սեղանաւորութիւն, Ոսկերչութիւն, Պղին-
ձագործ, Ատաղձագործ, Պէշաք, Սափրիչ,
Մսագործ, եւ այլ մասնաւոր արհեստք:

Եկեղեցի Հայոց. — 1. Ս. Աստուածածին
մայր եկեղեցի, 2. Ս. Սարգիս, 2. Ս. Լուսաւո-
րիչ, երկու Ս. Եկեղեցեաց մէջ կը պաշտօնա-
վարեն 10 Բահանայք. Տարեկան ծախսուց
ընդհանուր գումարն է 16000 զրուշ. Ս. Աս-
տուածածին եկեղեցին ունի՝ 24 կտոր Հայե-
րէն հին ձեռագիրք, Ս. Սարգիսը 60, եւ Ս.
Լուսաւորիչն միայն մէկ կտոր:

Վարժարան Հայոց. — Ա. Հայկեան վար-
ժարան՝ Ս. Աստուածածնայ թաղին. ունի
230 աշակերտ. եւ 6 դասատու. տարեկան
ծախքն է 17500 զրուշ:

Բ. Յակովբեան վարժարան՝ Ս. Սարգսի
թաղին. ունի 170 աշակերտ եւ 5 դասատու.
տարեկան ծախքն է 16000 զրուշ:

Գ. Սարգիս Կիւմեան վարժարան՝ Ս. Լու-
սաւորչայ թաղին. ունի 450 աշակերտ, եւ 8
դասատու. տարեկան ծախքն է 25000 զրշ:

Դ. Հայկունեան աղջկանց վարժարան, ու-
նի 300 աշակերտուհի, 1 դասատու, 5 վար-
ժուհի. տարեկան ծախքն է 7000 զրշ:

Վարժարանք հինգ հինգ անդամներէ բաղ-
կացեալ հոգաբարձութեանց հսկողութեան
ենթարկուած են. Տարեկան ծախքերն ամսե-
ամիս կը մատակարարուին թաղ. խորհրդոց
կողմանէ Ս. Եկեղեցեաց սնտուկներէն եւ
կարող աշակերտներէ հաւաքեալ ամսաթո-
շակներէն:

Ուսման եւ Լեզու. — Չորից վարժարա-
նաց մէջ կ'աւանդուին, ա) Կրօնագիտութիւն,
բ) Հայերէն, Թուրքերէն եւ Գաղղիերէն լե-
զուք, գ) Ազգային, Օսմանեան եւ Ընդհ. աղ-
քաց պատմութիւնք, դ) Ուսողութիւն (Թը-
ւաքանութիւն, Դրամաբիւ), ե) Բնական պատ-
մութիւն եւ Տարբեր ընդհանրութեան, զ) Գը-
ծագրութիւն եւ Գրավարժութիւն, է) Երա-
ժշտութիւն, ը) Ընթերցմունք, թ) Ասեղնա-
գործութիւն:

Աղիւտաց Հոգաբարձութիւն. — Կեսարիոյ
մէջ Հայ աղքատաց տնէ ի տուն, գեղէ ի գիւղ

մուրալու սովորութիւնն՝ տաւն եւ երկու տա-
րիներէ ի վեր վերցուած է: Սոյն Հոգաբար-
ձութիւնը ամէն շաբաթ կը հոգայ քաղաքիս
մէջ 120 տուն Հայ աղքատաց ամէն պիտոյքն,
եւ ձմեռուան եղանակին մէջ նաեւ կուտայ հա-
գուստ, վառելիք, եւ այլն: Երկրորդ՝ կը նպաս-
տէ նաեւ, որչափ որ կարելի է եւ հարկ, դըր-
սէն եկած անխնամ աղքատաց՝ եթէ վիճակիս
Առաջնորդին կողմանէ վկայեալ են: Հոգա-
բարձութեան տարեկան ծախքն է 30 հազար
զրուշ, որք կը գոյնանան կալուածոց տարե-
կան վարձքերէն, բարեպաշտ ժողովրդեան
կամաւոր նուիրատուութիւնէ, եւ մասնաւո-
րաց կտակներէն: Հոգաբարձութիւնը 11 ան-
դամներէ կը բաղկանայ. բայց ի Առնետապե-
տէն միւս 10 անդամք կը փոխուին երկու տա-
րին մի անգամ:

Միւստիւրիւն, նշան, պատկ եւ քաղման
խորհուրդք երկու տարիներէ ի վեր վիճակիս
Առաջնորդին անպատճառ հրամանագրով կը
կատարուին: Քահանայք կ'ընդունին իւր-
եանց իրաւունքն որոշեալ քանակութեամբ.
ոչ ոք կարող է որոշեալ իրաւունքէն աւելի
բան մը պահանջել եւ առնուլ: Տուրքերն առ-
տիճանաբար կը գանձուին: Ամենայնոքին աղ-
քատէն բան մը չառնուիր:

Հայերէն հին ձեռագիրք. Ս. Աստուածած-
նայ Մայր եկեղեցւոյ սեփական, թուով 24:

ԹԻԻ 1. ԱԻԵՏԱՐԱՆ

Տես ԾԱՂԻԿ Երազիր, Թիւ 36, 18 Մայիս
1891 թուական:

ԹԻԻ 2. ԱԻԵՏԱՐԱՆ

Թուրք 260, կամ 320 էջ, Երեւոյթիւն 17×
13,5 հարկերորդամբ: Տող 22: Գրութիւն
երկիւրեակ 13×9 հրդ. երկու սլանակաց մի-
ջեւ եղած բացութիւնն է 1/2 հրդ. Գիր բո-
լորագիր, միջին մաքրութեամբ, սեւ թա-
նաք: Նիւր փոքր ինչ գեղեցիկութիւնով,
ողորկեալ, Կազմ արեւելեան, տախտիկայ
կաշեպատ. երկու արտաքին երեսներն ար-
ծաթապատ են, որոյ յիշատակարանն է.
« Ընց, արծաթապատ սր Աւետարանին, ըն-
չիւք Մեհաւոս Անայի գանձանակին, ի վայե-
լունս եկղեւոյ Սր Ածնին, ի թվին Ռճիւն
(=1676), ամէն. յիշատակ է Ածածնին Կե-
տարեայ Կապաղովկին: » Հանգամանք՝ բաւական
լաւ եւ մաքուր վիճակի մէջ պահուած է:
Պատկերք թուով 4: Խորանք թուով 4: Եզե-
րազարդ՝ մեծ ու փոքր՝ թուով 204: Դատարկ
թիւ. 1. 2ա սկիզբէն, թիւ. 120ա, եւ 258ա,
259, 260 վերջէն: Ժամանակ 2 եւ 1/2 (=1499):
Գրիչ անձանք: Տեղի ի Սր Բաղաքն երու-
սողէ՛մ ի Սր Աթուռն Տն Եղբաւր, Տը՝ Յարապն:
Յիշատակագրութիւնք թիւ. 257ր եւ 258:

Տեղեկութիւնք. 1. Ամէն գլխոց սկզբնադը-
րերն են զարդագիր եւ երբեմն ալ քոչնագիր,

կարմիր եւ կապոյտ մեղանով գրուած, եւ ա-
մէն համարներու սկզբնադրերն են զլսագիր՝
կարմիր մեղանով գրուած:

2. Մատենիս սկիզբն եւ վերջն երկուքա-
կան թղթեր կան մագաղաթեայ կէս երկա-
թագիր գրուած, յորոցմէ կ'օրինակեմք մի մի-
այն հետեւեալքն:— (ա « Մի եթէ զաւրն ամե-
« նայն հերկիցէ որ հերկէ գերկիր, միթէ ա-
« սիցէ կաւն ցրուտն, զի կաս, զի ոչ գոր-
« ծես, չիք քո ձեռք, միթէ ասիցէ ստեղծ-
« ուածն յստեղծիչ իւր թէ ընդէր այսպէս
« ստեղծ... »—բ) « Եւ ասէ Տր ցՄովսէս՝ ով
« ետ բերան մարդոյ կամ ով արար զսուլ եւ
« զհամր, զանկանն եւ զկոյր ոչ ապաքէն ես
« Ած. եւ արդ երթ եւ ես բացից զբերանքս,
« եւ խելամուտ արարից զքեզ զսր պարտիցէ
« իտաւեալ, եւ ասէ աղաչեմ զքեզ Տէր առ
« քեզ ի ձեռն զայդ ոք զաւր... »

Յիշատակարանք. — 1. Թիւ. 257ր. « Փառք
մառաւորեալ համագոյ եւ միասնական Սր
Երրորդութեանն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն
Սրոյ յամենայն արարածոց ամէն: Արդ՝ գը-
րեցաւ Ածային Սր Աւետարանս, ի Սր Բա-
ղաքն Երուսաղէմ, ի Սր Աթուռն Տն Եղբաւրն,
որ այժմ է վանք Հայոց ազգայն, ընդ հովան-
եաւ լայնանիստ, շնորհալից եւ գեղեցիկայար-
մար Սր Յակովբայ Տաճարիս, եւ այլ Սր Տը-
նաւրինականացս որ կան ի Սր Բաղաքս Երու-
սաղէմ: Ի թվականութեանս Հայոց 2 եւ 1/2
(=1499) ամի: Ստացաւ զՍա Բաւաթըր եւ եր-
կիւղածն Այ Յարապն ի հալալ ապրանքն,
եւ եղ յիշատակ իւր եւ կենակցին Խաբունին,
ի գեղն Խանձառն, յիշատակ բարի հոգոյ իւ-
րոյ եւ ծնաւդաց իւրոց: Արդ՝ աղաչեմ զման-
կունադ Սր Եկեղեցւոյ որք վայելէք յԱծային
սեղանոյս, յիշեալիք ի Սր եւ ի մաքրափայլ
յաղաւթս ձեր առաջ զենկոյն Բաթ Յարապն եւ
զիւրոյ կենակիցն եւ զծնաւդս իւր եւ զամե-
նայն արեան մերձաւորս եւ Ած ողորմի ասա-
ցէք եւ մեղաց թողութիւն խնդրիցէք, ամէն:
Եւ ով ողորմի աս... » (Թուղթ ինկած էր):

2. Թիւ. 258ա (Այլ գրիչ). « Փառք միաս-
նական Սր Երրորդութեանն ամէն: Զվերջին
կազմով Սր Աւետարանիս (Պաւղոս) Բաւաթըր
եւ երկիւղածն Այ զՊետրոս կրանաւորն որ
ը(ս)տացաւ զՍա ի հալալ արքեանց յիշատակ
իւր եւ ծնաւդաց իւրոց, հաւրն Կարապետին եւ
մաւրն Ղիմաթին, եւ Յովաննիսին եւ Կուզալան-
նային եւ ամենայն արեան մերձաւորաց նորին,
եւ եղ յիշատակ ի դուռն Սր Ածածնին որ
կարգան հանապազ եւ Ած ողորմի տան յիշա-
տակին եւ կազմողին եւ գրողին ի թվին ՌԻ
(=1571): Ի յայսմ ամի Ազգն Թուրքաց գնաց
զաւրաւքն ի Կիւրոս կղզոյն վերա: »

ԹԻԻ 3. ԱԻԵՏԱՐԱՆ

Գիրք միջակ: Կազմ արեւելեան տախտակ-
եայ կաշեպատ: Նիւր՝ թուղթ սպիտակ, ողորկ:

եալ: Հանգամանք՝ մաքուր պահուած է: Գիր՝ բոլորագիր միջին մաքուր թեւամբ, սեւ մեկն: Գրութիւն՝ երկսիւնակ: Խորանք՝ թուով 4 և Լուսանցագրաբէ՝ մեծ ու փոքր՝ թուով 20 և, բայց ոչ այնչափ արհեստիւ են: Ժամանակ՝ 20 և (1479): Գրիչ՝ Սարգիս արեղայ: Տեղի անձանթ: Տէր՝ Վազար ի վայելումն Կարապետ Քահանայի: Տեղեկութիւնք՝ Մատենիս ամէն գլխոց սկզբնագրերն են զարդագիր, թռչնագիր և ամէն համարներուն՝ կարմիր գլխագիր:

Յիշատակագրութիւնք՝ Ա. ի վերջն Մատթէոսի Աւետարանին գրեալ. — «Սբ. Աւետարանչիս բարեխաւսութեամբ Քս Ած ողորմեա գրողիս սորա մեղաւք զառացեալս սուտ անուն Սարգ. արբ. և ծնաւդին իմոյ: Քս Ած ողորմեա ի քո միւսանգամ գալստեանն ստացողի Սբ. Աւետարանիս Ղազարի:»

Բ. ի վերջն Ղուկասոս Աւետարանին գրեալ. — «Տէր Յս ողորմեա ստացողի Սբ. Աւետարանիս Ղազարի իւր ծնաւդայն:»

Գ. ի վերջն Յովհաննոս Աւետարանին գրեալ. — «Փառք Փրկչին և յիշատակ գրչին անարժանի և մեղաւորի ամէն: Ի թվիս Հայոց 20 և (1479): Գրեցաւ Սբ. Աւետարանս ձեռամբ անարժան սուտ արեղայի, յիշատակ Ղազարի և իւր ծնաւդին, և ամենայն արեան մերձաւորացն, որ ստացաւ զՍա յիւր հալալ ընչից իւրոց. եւ ետ յիշատակ Կարապետ Քահանային ի վայելումն անձին իւրոյ. յիշեցէք զեղբայր սորա զԵսիմ և զիւր ծնաւդն զՀայրն զՊարոն Սողոմոն և զմայրն իւր և զայլ արեան մերձաւորսն: Դարձեալ աղաչեմ զձեզ, ով Սբ. Ենթերցողք, յիշեալիք ի Սբ. յաղաթս ձեր զՊարոն Ղազարն և զիս անարժան զՍարգիս անուն, աղաչեմ անմեղադիր լերուք սխալանաց սորա զի կար մեր այսչափ էր, և ով որ զմեզ յիշէ, Ած զինքն յիշէ յիւր արքայութիւնն, ամէն:»

Դ. (Այլ գրիչ), «Փառք Փրկչին և յիշատակ Կարապետին ի թվիս Հայոց 22 և (1523), Էս Կարապետս որ ըստ(ցա)յ զԱւետարանս, յիշատակ Ըսպանցի և իւր ծնաւդին Տղայաբոնին, և կողակցին իմոյ Դուռնիքի և զաւակին իմոյ Նուրնուրին, և ամենայն արեան մերձաւորացն որ ստացաւ զՍա ի հալալ ընչ(ից) իւրոց ի անձին իւրոյ: Յիշեցէք զեղբայր սորա զԱւագապարոն և զզայլ արեան մերձաւորսն: Դարձեալ աղաչեմ զձեզ, ով Սբ. Ենթերցողք, յիշեալիք յաղաթս ձեր Ըսպանցի և զիս անարժան յիշեցէք և Ած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն, ամէն:»

Թիւ 4. ԿԱՆՈՆԻԳՐԻՔ

Գիրք միջակ: Կազմ արեւելեան, տախտակեայ կաշէպատ: Նիւր՝ փոքր ինչ գեղնագոյն թուղթ. կակուղ ողորկեալ, Հանգամանք՝ բաւական մաքուր պահուած է: Գիր՝ բոլորագիր, ոչ այնչափ մաքուր: Գրութիւն միասիւնակ. սեւ մեկն: Ժամանակ՝ ՌժԺԹ (1670): Գրիչ՝ Դրիգոր: Տեղի՝ Կեսարիա, ընդհովանեա Սբ. Ածածնայ: Տէր՝ Ս. Աստուածածին եկեղեցին: Տեղեկութիւնք՝ Մատենիս վերջն գրեալ. — «Ամենապատեալ ճիւղահամար ընդարձակ բացատրութեամբ:»

Յիշատակարան: «Փառք... Արդ՝ կատարեցաւ և կազմեցաւ Սբ. Առաքելագիր և Հայրապետագիր Կանոնքս, ի թվին ՌժԺԹ (1670) յունիս ամսոյ ի յունիս, ի մայրաքաղաքս Կեսարիայ, ընդ հովանեա Սբ. Ածածնայ և Սբ. Սարգիս ձեռամբ, յոգնամեղ և անարհեստ գրչի Դրիգորի: Արդ՝ անկեալ -

ղաչեմ զձեզ, ով պատուական հարք իմ և եղբայրք, որք հանդիպիք սմա տեսանելով և կամ գաղափարելով յիշեալիք ի մաքրափայլ յաղթս ձեր զվերոյգրեալս, և զծնողքն իմ: Այլ և յիշեալիք զըստացողք սորին որ ի Սբ. Տիրամօր քսակէն գնեցին զայս Կանոնգիրս և եղին յիշատակ ի դուռն Սբ. Ածածին, զի որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի ապէնիազ արարչէն մերմէ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:»

Թիւ 5. ՍԱՂՄՈՍ

Գիրք մեծադիր: Կազմ արեւելեան, բայց քայքայուած: Նիւր՝ թուղթ սպիտակ: Գիր՝ բոլորագիր, բաւական մաքուր, սեւ մեկն: Գրութիւն՝ երկսիւնակ: Լուսանցագրաբէ՝ բաւականաչափ ունի, բայց ոչ այնչափ արհեստիւ: Տեղեկութիւնք՝ Մատենիս՝ որ է Սաղմոս, իւր կազմին քայքայուելուն պատճառաւ, սկիզբէն, մէջէն և վերջէն բաւական թղթեր ինկած են, հետեւաբար չունի ոչ յիշատակարան և ոչ ալ թուական:

Թիւ 6—7. ԿԱՆՈՆԱՐԱՆՔ

Գիրք միջակ: Կազմ արեւելեան հին, տախտակեայ կաշէպատ: Նիւր՝ թուղթ, կակուղ և փայլուն, փոքր ինչ գեղնագոյն ևս: Հանգամանք՝ թէ և բաւական մաքուր պահուած է, բայց սոյն երկու գանձարաններուն ևս վերջերէն մի քանի թղթեր ինկած են: Գիր՝ բոլորագիր միջին մաքրութեամբ:

Տեղեկութիւնք՝ սոյն երկու մատենքն, որք են Պանծարան, կը պարունակեն իւրեանց մէջ գանձեր, զանազան յատուկ օրերու և սրբոց մասին որոց շատերուն սկզբնատառերն կը կազմեն Խաչատուր, և նաև Գրիգոր. երկու գիրքն ալ միեւնոյն ձևն ու գիրքն ունին զըրեթէ, և միեւնոյն պարունակութիւն. թուական և յիշատակարան չունին:

Թիւ 8. ՄԵԿԷՆ. ՄԱՏԹ. ԱՒԵՏԱՐԱՆԻ

Գիրք միջակ: Կազմ արեւելեան, տախտակեայ կաշէպատ: Նիւր՝ թուղթ կակուղ և ողորկեալ: Հանգամանք՝ բաւական մաքուր պահուած է: Գիր նօսարագիր միջին մաքրութեամբ: Գրութիւն միասիւնակ. սեւ մեկն: Գրութիւն՝ Սարգիս Ղրիմացի որդի Հաբիմի: Տեղեկութիւնք՝ Ա. Մատենիս՝ որ է Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին, վեց մասերու բաժնուած է: Բ. Կ'սկսի հետեւեալ վերնագրով. «Հաւաքեալ քաղուածոյ. Դրիգորի աշակերտի եւամեծի տիեզերալոյս Վարդապետի Յովհաննոս Որոտնեցոյ:»

Յիշատակագրութիւնք՝ 1. ի վերջն երրորդ մասին գրեալ. — «Ջրազմամեղ գրչակո. Սարգիս անուն որդի Հաբիմի յիշեալ մաղթեմ, սիրողացք բանի, անմեղադիր լեր նուստիս, զի խիտ շտապով էր աւերինակ գրոյս:»

2. ի վերջն մատենիս գրեալ. — «Աւարտեցաւ գիրքս վեցերորդ հատոր քաղուածոյս, ի փառս Քրիստոսի աւրհնելոյն յաւիտեանս ամէն: Ջգծող սորա զՍարգիս Ղրիմացի, որ եմ ես որդի հաբիմի, յիշեալիք միով Տէր ողորմեայի, և անմեղադիր լերուք զի յոյժ ըլտապեցայ:»

Կեսարիա
11 յունիս 1891

Գործնական Քերականութիւն Ֆրանսերէն լեզուի. 2,500 հրահանգներով. ի սէտս նախակրթարանի բարձրագոյն կարգաց. Բ. տըպագրութիւն. հետեւողութեամբ Լ. Լըբլէրի, աշխատասիրաց Ա. Պիլէռճեան: Գին 5 զրշ:

ԹԷ ՈՐՆ Է ՃՇՄԱՐԻՏ ՓԱՌՔՆ

Որ և իցէ փառքի մը տիրանալը ընդհանուր մարդկութեան գլխաւոր բաղձանքը եղած է միշտ, և է. առաջին մարդէն սկսելով այս այսպէս է: Մարդուս այս բաղձանքը իւր յառաջադիմութեան առաջին խթանն է, սակայն մարդիկ երբեմն իրենց այս բաղձանքը չափազանցելով՝ ամենէն ստորին, ամենէն վատ միջոցներն խի գործադրած են իրենց նպատակին հասնելու համար: Ասոր հակառակ գտնուած են և կան այնպիսիք ալ որ բնաւ այս բաղձանքը չունենալով հանդերձ՝ փառաւաւորուած, փառաց գագաթնակէտը հասած են:

Եղած են իշխաններ, ժողովրդավետներ, թագաւորներ, աշխարհակալներ, որոց փառքը մի միայն իրենց զօրութիւնը եղած է. կան այնպիսիք ալ որոց փառքը իրենց արդար և առաքինի գործերը եղած են:

Հասարակ ժողովուրդը այս երկու տեսակի պատկանողներն ալ ուշադրութեամբ կը դիտէ, կը նայի առաջնոց դէմքին, կերպարանքին և ձևերուն, կը տեսնէ թէ իրեն պէս մարդիկ են, կը փառաւորէ զանոնք, սակայն առ ահի օրինաց, այսինքն տոխուած ըլլալով միայն արտաքին ձևակերպութիւն մը կը կատարէ օրէնքը լեցունելու համար. զանոնք դիտած ժամանակը՝ անոնց դէմքին վրայ ամբարտաւանութեան դրոշմը կ'որոնէ, գտած է, կը սոսկայ, զղուանք կ'զգայ անոնցմէ, հակառակ քնազգում մը կ'ունենայ, գէշ համոզում մը կը գոյացունէ հոգւոյն մէջ: Այն որ անգամ մը այս կերպով կը փառաւորուի, այս կերպով կը ճանչցուի ընդհանուրէն, այլ ևս բիւր բարիք, անհամար արդարութիւն անօգուտ են, մարդկութեան սրտին մէջ արձանագրուածը Պիղատոսի գրչէն ելած է:

Իսկ գալով վերջիններուն, հասարակութիւնը անոնց դէմքը դիտած ժամանակը հոն տարբերութիւն մը կ'որոնէ իւր դէմքին հետ բաղդատմամբ. կ'ուզէ տեսնել թէ այնպիսի առաքինի և վեհ հոգի մը ինչպիսի մարմնոյ մէջ ամփոփուած է. գեղեցիկ կը գտնէ զայն որչափ ալ տգեղ ըլլայ. իւր դէմքէն տարբեր կը գտնէ անորը որչափ ալ նմանութիւն ըլլայ. վերջապէս անպատճառ տարբերութիւն մը տեսնել կ'ուզէ անոր և իւր մէջ. կարծես կը գտնէ, աչքերը անթիթ յառած է անոր վրայ, ո՞ւր կը նայի. աչքերուն, այո՛, աչքերուն կը նայի, անոր նայուածքին մէջ գտած կը կարծէ արդէն այն տարբերութիւնը որ անպատճառ պէտք էր ըլլար՝ ըստ իւր կարծեօք՝ իւր և անոր մէջ: Գոհ է, այո՛, գոհ է, և ի տես նորա կը հրճուի, զի գեղեցիկ գտաւ զայն քան զինքն: Աշխարհ կը փառաւորէ այսպիսիները. այս պարագայիս մէջ փառաւորութիւնը արտաքին ձևակերպութիւն մը չէ որ կը կատարէ մարդ, իւր ճշմարիտ գագացումն է որ կ'արտայայտէ, հոգւով կը փառաւորէ. հոս փառաւորութիւնը իրեն համար կերպ չունի, ընդունուած ձև մը չունի, սրտէն կը բլլի, անկէ կ'ստեղծուի, ոչ որակ ունի և ոչ քանակ, անհո՛ւն է, անսահման է:

Բիւր երանի անոր որ իւր գործերովը իրաւամբ արժանի կ'ըլլայ այսպէս փառաւորուելու ընդհանուրէն:

Ահա՛ այս է ճշմարիտ փառքը:

Իսկիւսար ՊԵՐՃ

ՀԵՏԱՔՐՔՐԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Հանգուցեալ Կարապետ վարդապետ Շահնազարեանի կենսագրութեան ինչ ինչ կէտերու մասին:

Կամք չ'ունիմ դիտողութիւն ուղղել կենսագրէն յօրինեալ, և մեր մէջ սովորական դարձած խորհրդաւոր յառաջաբանի մասին, այլ կը հարցնեմ թէ. — Հանգուցեալ Կ. վարդապետ Շահնազարեան 1842ին Կեսարացի Բարսեղ Արքեպիսկոպոսէ արեղայ ձեռնադրութեւնէ ետք, 1843ին, ի վարձատրութիւն իւր բարեռք ծառայութեանց՝ Կարապետ արեղայ վարդապետ կը ձեռնադրուի Վաղարշապատու Մայր եկեղեցւոյն մէջ՝ Յովսէփ Արքեպիսկոպոս Մարութեանցէ: — Իրօք 1849ին Պոլսոյ Հայք տգիտութեան ովկէանոսին մէջ էին, և սակաւթիւ ուսումնականք միայն, մէկմէկ լուսաւորութեան փառոս ձանջուած, իրենց մէն մի խօսքն ու գրութեանք՝ իրեւ երկնային պատգամ ընդունել տալու փառքքը կը հպարտանային. Պ. Կենսագիրը նոյն թուականին ի Պօլսոյ տալուած կարեւոր գործեանքն աչքէ անցուցած է. Սամաթիոյ և խոսքիւրի դպրոցներու յառաջադիմութեան մասին ո՞ր աստիճան տեղեկութիւն ունի: Խրոմի պատերազմի ատեն Գաղիացւոյ և Անդղիացւոյ բանակաց մէջ, ո՞ր դպրոցներու շրջանաւարտք լիաթոշակ թարգմանի պաշտօն կը վարէին: — Կարապետ վարդապետ, իրօք խոսքիւրի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն քարոզիչ եղած է: — Ըստ Կենսագրին, իրօք այն ատեն «Ազգ. Պատրիարքարանի մէջ կը կազմուէր հասարակական ահեղ ատեն մը՝ յորում Թորքութեամտայի դերը կ'ստանձնէ Չամուրճեան պատուելին» մինչ խնդրոյն ենթացկայ Շահնազարեան կ'ըսէ. «Ժողով գումարել յիշատակարաններ պատրաստել, Պատրիարք, Բարոյիչ, Աղանաւոր համախմբել, յուսուլով, քրէական յանցանքս, առանց պատասխան լսելոյ, դատաւարտել. բայց ժողովը, փառք Կ. Պոլսի ուսումնականաց, ամիրայի ակնկալութեան ներհակ վախճան ունեցաւ. արդոյ և գիտնական Պարոնայք Մկրտիչ Մոմճեան, Զօրայեան, Ալթուն Տիւրքի էֆ. Գալուստ Կոստանդեան և այլք անվեհեր համարձակութեամբ իմ կարծիքս պաշտպանեցին»: Կարապետ վարդապետ Շահնազարեանի խօսքերուն մէջ չեն երևիր բնաւ հաւատաքնական ահեղ ատեն մը, յորում Թորքութեամտայի դերը կ'ըստանձնէ Չամուրճեան պատուելին: Արդ, է՞ր մեր Պ. Կենսագիրը կը համարձակի Ազգ. Պատրիարքարանը Սպանիոյ հաւատաքնական ատենին նմանցընելով, Թորքութեամտայի աթոռ դնել հոն: — Պ. Կենսագիրը կ'ըսէ. հոն է Շահնազարեան: Իւր մեծագոր պաշտպաններէն աւելի՝ իրեն զօրավիգ ունի իւր փաստերը, աշխարհի մեծագոյն վկայն — Պատմութիւնը: Ըստ մեր Պ. Կենսագրին, եթէ իրօք «Ազգ. Պատրիարքարանի մէջ հաւատաքնական ահեղ ատեն մը կազմուած ըլլար, յորում Թորքութեամտայի դերն ալ տրուած լինէր Պ. Չամուրճեանի, Շահնազարեան կրնա՞ր, իրեն զօրավիգը, իւր փաստերը, աշխարհի մեծագոյն վկայն, պատմութիւնը, մէջ բերելով, արիւարար ջրել այն ամէն սոքապատեմութիւնները՝ որովք զինքը մոլորեցուցիչ և բողոքական կը համարէին: Արդեօք կարելի էր հաւատաքնական ատենին մը առջև փաստք, և այլն, մէջ բերելով անկէ յաղթական դուրս ելնել:

Կենսագիրը կ'ըսէ, «Շահնազարեան կը հանգիտանայ օրուան մեծ մարդը՝ նսեմացնելով մի շատ պատուելիներ և խաւարամիտ անձինք՝ որոնք իրենց գլուխն ունենալով ժամանակին Պատրիարքը՝ արդէն սկսած էին խուլ նախանձ մը տանիլ Շահնազարեանի վայելած համբաւոյն, և գայթակղիլ ա՛յս նորեկով վարդապետին մոլաւ քարոզութեանց վրայ»:

Կը հարցնեմ թէ այն միջոցին Շահնազարեանի նկատմամբ Ռուսաստանէն նպաստաւոր տեղեկութիւններ եկած է՞ին միշտ. — Ժամանակին Պատրիարքը, Յակոբ Սրբազան, խաւարամիտ անձ մ'էր, իրօք Շահնազարեանի վայելած համբաւոյն դէմ նախանձ կը տածէր: Պ. Կենսագիրը, Յակոբ Պատրիարքը խաւարամիտ անձանց պարագլուխ դնելէ յառաջ, նորա ուսումնասիրութեան մասին տեղեկութիւններ հաւաքած է, Ս. խոսքի հոյակապ վարժարանի ճակատը գրուած յիշատակարանը գէթ մի անգամ կարգապահ է: — Շահնազարեան վարդապետ կ'ըսէ. «Փառք Կ. Պօլսի պատուելի ուսումնականացը, արդոյ և գիտնական Պարոնայք Մկրտիչ Մոմճեան, Զօրայեան, Ալթուն էֆէնտի, Գալուստ Կոստանդեան և այլք անվեհեր համարձակութեամբ իմ կարծիքս պաշտպանեցին»:

Մինչ Պ. Կենսագիրը չը յիշէր յանուանէ Զօրայեան, Ալթուն Տիւրքի, Գալուստ Կոստանդեան անունները: Ինչէ՞ն է անուններու այս տարաձայնութիւնը Շահնազարեան վարդապետի և Պ. Կենսագրի միջև, իսկ Աղաթոն Գրիգոր էֆէնտի 49 թուականին, Կենսագրէն նշանակեալ անձանց անուանց մէջ, ներկայութիւն, ազգեցութիւն, դեր ունեցած է: — Կ'ըսուի թէ աշխարհի մեծագոյն վկայն պատմութիւնն է, իսկ երբ ժամանակակից պատմութիւններ, որոց ականատեսք տակաւին կենդանի են, խեղադիւրուին, ի նկուն եկած գացած պատմութեանց վրայ ստուեր մը չե՞ն ձգեր: — Պ. Կենսագիրը, Շահնազարեանի երկասիրութիւնները թուած ատեն, չի մոռնա՞ր արդեօք հասարակութեան ներկայացնել նորա գրչէն եկած և ի Կ. Պօլսոյ լրագրի մէջ տպուած ականաւոր քննադատութիւն մը, որ իւր թարմութիւնը պահած է տակաւին: — Շահնազարեան, իւր ձեռքի ոտի ձեռք, որպէս կ'անուանէ զնա, ունեցած շահագրգիռ վիճաբանութեան մը ատեն, երբ նորա միակ ծագակաւոր որդին ննջեց, Շահնազարեան հրապարակաւ առ վշտացեալ մի օրինակելի վեհանձնութիւն և մարդասիրութիւն ցոյց չի տուա՞ւ, յորմէ հանգուցեալ երկասիրակի հայրն, հանգուցեալ բարձրապատիւ ձեռքի ոտի ձեռք իսկ ի գործով շարժելով՝ շնորհակալութիւն չի՞ յայտնեց արդեօք և իւր թերթին մէջ չի ծանոթց թէ ինքն արդէն հրաժարած է վեհանձն բարեկամի մը դէմ դրիչ շարժելէ: Կենսագիրը ինչո՞ւ այս պարագայն զանց կ'առնէ: Միթէ մեր օրերը վիճաբանողք այս կարեւոր պարագայէն օգուտ մը չէի՞նք քաղեր: Եւ քանի որ առիթը եկած է, ինչո՞ւ Շահնազարեան վարժարանի փակման տխուր պարագայները, Շահնազարեան վարդապետի կենսագրութեան առթիւ, չի ներկայացնել հասարակութեան: Միթէ հասարակութիւնը այս վերջին օրերս, երկրորդ, ճանճարացիչ և անխմտ յօգուածներ կարգաւ դժբաղդ հարկին ենթարկուած չէ՞:

Ազնիւ խոսքեր:

Չ'ուզելով լրագրիդ ազնիւ ընթերցողները ճանճարացնել, հարցարանս չափէն աւելի համառոտած եմ:

ՀԱՐՑԱՍԵՐ ՄԸ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ

Ա. Շրջան. Ոսկեքերանի երեսասարգութիւնը

Յ. Տ. 347—386

Ս. Յովհան, որ իւր պերճախօսութեան պատճառաւ Ոսկեքերան տիտղոսն առաւ, ծնաւ յԱնտիոք, Յ. Տ. 347, հարուստ և տոհմիկ ընտանեաց մէջ: Իւր հայրը՝ Սեկունտոս՝ Հռովմէական կառավարութեան առաջնակարգ պաշտօնեայներէն մին էր և անուանի իւր զինուորական ծառայութեամբ: Ամբողջ Հռովմէական պետութեան մէջ յայնժամ իրարու հետ մրցող չորս անուանի և բարգաւաճ քաղաքներն էին Հռոմ, Կ. Պոլիս, Աղեքսանդրիա և Անտիոք: Այս վերջինը թէպէտ մեծութեամբ չէր հաւասարեր Հռոմայ և Կ. Պոլսոյ, բայց կը գերազանցէր զԱղեքսանդրիա. իսկ իւր մեղմ և հաճելի կլիմային կողմէ առաջին տեղը կը բռնէր ամբողջ աշխարհի վրայ: Կառուցեալ Որոնտէս գետին ափանց վրայ, փոքր ինչ հեռի ծովեզրէն և չրջապատեալ գեղատեսիլ լեռներով որք զարգարուած էին դափնիներով, մրտենիներով և ուրիշ մշտադաւար բոյսերով, ստուգիւ յոյժ չքնաղ էր Անտիոք քաղաքն, ուր կուգային կը խոնուէին աշխարհի ամէն կողմէ զուարճասէրներ: Հարուստ էր քաղաքն և յաջողակ, վասն որոյ զարմանալի չէ որ յետին աստիճան զեղխութիւն և շուայտութիւն կը տիրէր քաղաքին մէջ: Ոսկեքերանի ժամանակ Անտիոք ունէր իւր 250.000 բնակիչ որոց իւրեւ կէսն էին Գլորիատոնեայ:

Զարմանալի իրողութիւն մ'է թէ կանայք շատ աւելի կը յարէին Քրիստոնէութեան և իրենց բարի վարուք մեծ ազգեցութիւն ի գործ կը դնէին արանց վրայ յօգուտ Քրիստոնէական կրօնին: Այնպէս որ Լիւսինիոս, նոյն դարուն անուանի ճարտարախօսն յԱնտիոք, կ'ողբար յունական դից և դիւցազանց կրօնն, և կը յանդիմանէր ժողովուրդը կծու լեզուաւ, որ փոխանակ Պղատոնի և Պլինիոսի պէտք կը դնէին՝ կ'ընդունէին իւրեանց մարց և կանանց կրօնն, այսինքն զՔրիստոնէութիւն: Հայրեր՝ անհոգ իրենց զաւակաց կրթութեան մասին, յաճախ կը պարծէին նոցա անառակութեամբ: մարք և եթ կը կրթէին իւրեանց զաւակներն բարոյականի և ճշմարտութեան մէջ:

Այս բարեպաշտ և առաքինի կանանց ամենէն առաջիններէն էր Անթուսա, Ոսկեքերանի մայրը: Ազնուական ընտանիքէ սերած էր Անթուսա. 20 տարեկան դեռատի հասակին մէջ, մինչ նոր յաշխարհ բերած էր զՅովհան, Սեկունտոս մեռաւ: Մանկամարդ այրին հրաժարեցաւ աշխարհային բոլոր հաճոյքներէ, իւր կռնակը դարձուց անոնց որ կը խնդրէին իւր ձեռքը, և ինք զինք նուիրեց իւր դեռահասակ որդւոյն կրթութեան: Ստուգիւ Ոսկեքերան իւր նախնական կրթութիւնը և իւր անրիժ և անյողդողդ բնաւորութեան սկզբունքը կը պարտի Անթուսայի որ իւրեւ բարեպաշտուհի Քրիստոնէայ հռչակ հանած էր ամբողջ Անտիոքայ մէջ: Կը պատմուի թէ երբ Յովհան պատանին զառաջինն գնաց անուանի ճարտասան Լիւսինիոս սովետաւոր քով իւրեւ ուսանող, հեթանոս փիլիսոփոսը հարցուց նմա թէ ո՞վ էր և որո՞ւ գաւակ, և երբ իմացաւ թէ Յովհան որդին է այնպիսի կնոջ մը որ հիմա հագիւ քառասուն տարեկան է և քսան տարի է ի վեր այրի է մնացած՝ նուիրելով ինք զինք իւր որդւոյն դաստիարակութեան, ապշեցաւ և դառ-

նալով դէպ յիւր աշակերտներն, գոչեց. «Ո՛վ սքանչելեացս, ի՛նչ ընտիր կանայք ունին այս Քրիստոնեաք»: Զայս ըսաւ Լիւանիոս որ իրրեւ հեթանոս ճարտասան՝ միշտ հակառակ կը խօսէր Քրիստոնէից:

Անթուսա աշխատեցաւ շատ բարձր դաստիարակութիւն տալ իւր սրբւոյն. չէր շատանար միայն Լատիներէնով և օրէնագիտութեամբ որք սովորական ուսմունքն էին այն դարուն՝ ստանալու համար բարձր գիրք մը. ոչ ալ ուզեց նուիրել իւր զաւակը կղերականութեան կամ վանականութեան՝ ինչպէս կ'ընէին շատ մարք այն դարուն մէջ: Վստահ էր իւր սրբւոյն բարուց վրայ, և չվարանեցաւ զրկել զնա մինչև իսկ հեթանոսի մը դպրոցը: Լիւանիոսի քով ընդհուպ հռչակ հանեց Ոսկերեքան իրրեւ ճարտասան. «Քրիստոնէայներ գոչեան զՅովհան մենէ»: Կ'ըսէին նոյն դարուն հեթանոս Յոյները. Անգամ մը երբ հարցուցին Լիւանիոս թէ զո՞վ կ'ուզէր որ իրեն յաջորդէր, պատասխանեց. «Յովհան պիտի ըլլար ինձ յաջորդ, եթէ Քրիստոնեայ չըլլար»: Խեղճ սովորատ, արդեօք կ'երևակայէ՞ր թէ պատանին Յովհան փառաց ի փառս պիտի բարձրանար, մինչ իւր անունն ի մոռացոնս պիտի մատնուէր:

Ոսկերեքան Լիւանիոս հակաքրիստոնէական և կռապաշտական գաղափարաց դիմադրեց իւր մօր ազդեցութեամբ և մանաւանդ Ս. Գրոց ուսմամբ, ուսում որ յետոյ ա՛յնչափ լաւ կերպիւ ներշնչեց զինք իւր բոլոր գրութեանց մէջ: Հեթանոս գրագիտին քով իւր գրական ուսումն աւարտելէ յետոյ, Ոսկերեքան փաստաբանութեան ձեռնարկեց ուր առաւել ևս կարէր զարգացնել իւր պերճախօսութիւնը: Բայց չսիրեց զայս չափազանց աշխարհային արուեստ, յորմէ հրաժարելով՝ ուզեց տալ ինք զինք հոգեւոր խոհմանց: Այս մասին մեծապէս ձեռնտու եղաւ նմա վեհափառ ծերունին Մեկեղիոս եպիսկոպոս: Մեկեղիոս Հայ էր, ծնեալ ի Մեկիտինէ (Մալաթիա) Հայոց, պարկեշտ և հեղահամբոյր բընաւորութեամբ օժտեալ ծերունազարդ եկեղեցական մ'էր նա: Նախ փոքր Հայոց Սեբաստիա քաղաքին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, բայց հերետիկոսական հերձուածութեանց պատճառաւ չկարենալով կենալ հոն՝ Անտիօքայ եպիսկոպոս ընտրուեցաւ, յամին 360: Ոսկերեքան երեք տարի քրիստոնէական ուսում առաւ այս հայ եկեղեցականին քով, և ապա նորա ձեռամբ մկրտուելով նուիրեց ինք զինք հոգեւոր գործի: Կ'ուզէր անապատական և մենակեաց լինել, բայց իւր մայրն չէր ուզեր որ իւր միամօր որդին լքանէ զինք և երթայ լեռները ճգնելու: «Առանձնանալ և հոգեւոր մտածութեամբ պարապի՞լ կ'ուզես. կ'ըսէր նմա Անթուսա. ահաւստիկ տունը տան մէջ ըրէ ինչ որ կ'ուզես ընել, բայց մի՛ թողուր զիս մինակ և չուսու»: Մեկեղիոս եպիսկոպոս ալ յորդորեց զՈսկերեքան չլքանել իւր վշտակիր մայրը:

Յամին 370 Արիոսեանց ազանդն, որ կ'ուրանար Քրիստոսի Աստուածութիւնը, զօրանալով Անտիօքայ մէջ՝ զՄեկեղիոս աքսորեցին իւր հայրենի երկիրը: Անոր տեղ կային բարեպաշտ երէցներ ընդ որս անուանին Դիսգորոս. սա մեծ միտիթարիչ և ուսուցիչ եղաւ Ոսկերեքանի իւր առանձնութեան մէջ: Առանձնութիւնը շատ աւելի լաւ կը գտնէր Ոսկերեքան քան աշխարհ մտնելը: Այս միջոցին էր որ ջերմ պաշտպան կանգնեցաւ Ոսկերեքան մի քանի վարդապետութեանց զորս յետոյ լը-

քաւ: Ինչպէս չամուսնանալ, ապաշխարանք քաշել կամ մարդ իւր մարմինը չարչարել և չխօսիլ. կ'ըսուէր թէ յաճախ օրերով և շաբաթներով կը նստէր առանց բառ մ'արտասանելու: Այս միջոցին շատ մը թախանջական հրաւերներ եկան Ոսկերեքանի և իւր Բարսեղ ընկերով որ գտն եպիսկոպոս լինին: Ինք ետ կեցաւ, յորդորելով զԲարսեղ որ երթայ: Բարսեղ հաւանեցաւ եպիսկոպոսանալ, սայմանաւ որ ինք ալ ընկերանայ նմա: Ոսկերեքան խոստացաւ, բայց երբ ձեռնադրութեան օրն եկաւ, պահուրեցաւ, թողնելով զԲարսեղ միակեպիսկոպոս լինելու: Այս վերջինս ապա ընդգրեց Ոսկերեքանի սոյն «Խաղախոսութեան» դէմ: Այս գանգատանաց պատասխանեց Ոսկերեքան «Յաղագս Քահանայութեան» անուն ընտիր երկասիրութեամբ մը որ ցայս օր ժամանակի քննադատից սքանչացման առարկայ եղած է:

Այս միջոցին պատահած դէպք մը մեծ ազդեցութիւն ըրաւ Ոսկերեքանի մտայ վրայ, ինչպէս ինքն ալ կը յիշէ յետոյ իւր մի քարոզին մէջ: Վաղէս կայսր յոյժ խիստ հրաման մը հանած էր ընդդէմ մոգութեան. որու քով որ սոյն գաղտնի արուեստին վերաբերեալ գրութիւնք կամ այլ ինչ գտնուէին՝ վա՛յ այն անձին: Օր մը մինչ Ոսկերեքան և իւր ընկերը թէնդորէտոս կը պտըտէին Որոնտէս գետին եզրը, Զրին մէջ սպիտակ բան մը նշմարեցին: Թանկազին բան մը կարծելով թէնդորէտոս վերցուց զայն Զրին մէջէն. վա՛յ դժբաղդութեան, մագաղաթ մ'էր սա մագական գրութեան օժիտ: Յանկարծ զինուոր մ'երևան ելաւ, լրտես մը, մոգական գրութիւններ փնտռող պաշտօնեայ մը: Ոսկերեքան և իւր ընկերը կորսուած էին, սարսափ և ահուգող պատած էր զերկունս ալ: Զէր մնար իրենց այլ ինչ բայց միայն նետել գրութիւնն ի ջուր առանց ցուցնելու զայն: Զայս յաջողեցան ընել, բայց զայս նախախնամական գիպուած մը համարեցաւ Ոսկերեքան և յետ այնորիկ աւելի ջերմ փափաք մ'ունեցաւ նուիրել իւր կեանքն Աստուծոյ:

Թուի՝ իւր մօր մահուանէ յետոյ, որ հաւանականաբար տեղի ունեցաւ յամին 374, Ոսկերեքան որդեգրեց անապատականութիւնը ուր ինք զինք տուաւ Ս. Գրոց և իւր ներքին մարդուն ուսման: Այն ժամանակուայ անապատականք կամ ճգնաւորք պարզ կեանք վարող աշխատասէր և ազօթասէր մարդիկ էին և կը բնակէին քարայրներու և հիւզակներու մէջ: Հատորներ գրեց Ոսկերեքան ի պաշտպանութիւն վանականութեան ընդդէմ՝ զեղիս և անբարոյական կենաց և անոր չուայտութեանց: Վեց տարի անապատական կեանք վարեց, մանաւանդ վերջին երկու տարիներն չարաչար կը ճգնէր քարայրի մը մէջ⁽¹⁾, յորմէ մեծապէս խանդարելով իւր առողջութիւնը, ստիպուեցաւ լեռնէն յԱնտիօք դառնալ, յամին 380: Մեկեղիոս եպիսկոպոս, որ վերագործած էր աքսորէն, սարկաւաղ կամ գրականութեան ձեռնադրեց զՅովհան. այս թեթեւ պաշտօնի մէջ բոլոր աւելորդ ժամանակը կուտար զանազան կրօնական երկասիրութիւններ յօրինելու և վշտացելոյ միտիթարական թուղթեր գրելու, որոցմէ տակաւին կը գրտ-

նուին: Այս միջոցին էր որ գրեց յոյժ ընտիր երկասիրութիւն մը Բարեղ մարտիրոսին վրայ որոյ մարմինն ամփոփուած էր Դափնեայ անտառին մէջ: Դափնին էր Անտիօքայ արուարձանաց միոյն մէջ անտառ մը որ աշխարհի ամենէն հաճելի վայրը կը սեպուէր ի հնունդն, ժամանակաւ նուիրուած էր Ապողղոնի, և բոյն էր մեղկութեան և անառակութեան, իսկ Ոսկերեքանի ժամանակ, ի նշան քրիստոնէական յաղթութեան, Բարեղ մարտիրոսին մատուռն կառուցուած էր անդ փոխանակ կռապաշտական Ապողղոնին: Յուլիանոս ուրացող կայսր 362ին այլուր փոխադրել տուաւ Բարեղայ Ոսկերոտիոն, և անդ հաստատեց զԱպողղոնեան պաշտօնը. բայց այս փոփոխութենէն քիչ յետոյ Դափնին այրեցաւ. Քրիստոնեայք զայս նկատեցին իրրեւ արդար պատիժ երկնային ցաւման: Ոսկերեքանի սարկաւաղութեան միջոցին գրած երկասիրութեանց մին է նաև զՎման և ապաշխարութեան վրայ գրած երկու հատորներն որք յոյժ գեղեցիկահիւս գրութեան են:

Ա. Կ. Ս.

ԳԵՐԵՋՄԱՆԻ ՄԸ ԱՌՁԵԻ

Մին քան զմիւսն գտնադէտ մահեր պատահեցան վերջին ժամանակներս ազգային շրջանակին մէջ: Կրնամք ըսել թէ 1891 տարին ձախաղ, ցաւալի տարի մ'եղաւ ազգին համար, Հայ գրականութեան համար: Անողորմ մահը կարճ ժամանակամիջոցի մէջ տուաւ յաւիտ խնկ մեր ձեռքէն զՊարոնեան, զԱղամեան և զայլս, նշանաւոր անձնաւորութիւններ ոյց նմաններ գարեւու ընթացքին մէջ հազիւ երեք յերեան կուգան: Աղամեանի, Մաղաքեանի, Կիւրեղեանի մահուամբ սգայինք ազգային վաղաթարշաճ բեմին լուսաշող աստղերն, և Յակոբ Պարոնեանի վերայ ազգն համայն կ'աշխարհէ անզուգական երգիծաբանը, անշահաւոր գործիչն, փառք հայութեան, սրտի Հայ դպրութեան: Անշահաւոր, ո՛հ, որքան հազուադիւս է ի մեզ անշահաւոր մարդ, այն ալ գրո՛ղ, գործիչ: Անշահաւոր. պէտք է կանգ առնու՞մ այդ բանին վերայ, մի վեհ, ուղիղ, անկեղի նկարագիր էր նա այսպիսի ժամանակի մը մէջ՝ երբ դիմակաւորներ կը վիտան ամեն կողմ: Զը գիտեր չողորմութիւն. քծնիլ անծանօթ էր իրեն. սիրահար ճամարտութեան, երկրպագու արդարութեան, իւր հզօր գըրչաւ ձաղկեց մեր ազգային մուլութիւններն. մեծատունն ու աղքատն, կղերն ու աշխարհականն անմասն չմնացին նորա հարուածներէն: Ուր որ զեղծու՞մ մը, ապօրինաւորութիւն մը նշմարուէր, հոն կ'երևէր Պարոնեան որ մատնանիլ կ'ընէր յանցանքն ու յանցաւորն՝ հեղնելով ու խնդացնելով. քանի քանի սուտ ազգասէրներու դիմակը պատուեց վար առաւ յանդգնաբար և այդ դիմակին տակ ապաստանող ետութիւնն, չահափրութիւնն, գձձութիւնն երևան հանեց բովանդակ իրենց մերկութեան մէջ:

Խորազնին դիտող մեր ընտանեկան, ազգային ու ընկերական զեղծմանց ու ցաւոց, իւր զգայուն ոճովն պարզեց զայնս մերկապարանոց, յանձնելով ի նկատառումն որոց որ անկ է: Իրաւ, իւր այս դժուարաբերտ գործոյն մէջ բաղիւնեցաւ անլուր ու անասելի դժուարութեանց, բայց երբեք չկասեցաւ. առաւել ևս գօտեւորեցաւ. ևս առաւել սրեց

(1) Անտիօքէ չորս ժամ հեռաւորութեամբ վանք մը կայ, Ս. Յովհան Ոսկերեքան անուամբ, Պեթրոս գիւղին մէջ. այս էր, կ'ըսեն, սրբոյն ճգնած վայրն: Ամբողջ գիւղը հայաբնակ է, և վանքն, որ յոյժ հաճելի գիրք մ'ունի, կը վերաբերէ Հայոց, բայց բոլորովին աւերակ է, ինչպէս շատ մը ուրիշ վանքայք Հայոց:

իւր գրիչն : Այդ աննման գրչին ծնան այն սքանչելի հրաշակերտներն՝ Ասամարոյժն Արեւելեան , Քասրոններն , Ազգային Ջոզերն , Պրոսոյն , Խիկարներն , Մեծապատիւ Մուրացկաններն , Օրացոյցն , Ծիծաղներն որք անմահացուցին իւր անունն և յորս տպագայ սերունդք պիտի զմայլին նորա հանճարոյն վերայ : Երգիծարանութեան հայրն եղաւ ի մեզ իրաւ , իրմէ առաջ գտնուեցան ոմանք որք մշակեցին գրական զայդ ճիւղ , սակայն ոչ ոք ի նոցանէ հաւատարեցաւ իրեն : Նոքա ռամկական գուհիկ խօսակցութիւններ , պատմութիւններ միայն աւանդեցին : Ընդհակառակն Պարոնեան անպէտ անօգուտ կը համարէր պառաւ կանանց քղանցքը բռնել , անոնց խօսակցութիւնները մտիկ ընելով ի գիր առնուլ : մէկիւր թողոյց այդ հետեւող դրութիւնն և սկսաւ ընտանեկան , ազգային , ընկերական խնդիրներ յուզել , լրատարներ պարզ ու անպաճոյճ ձևերով ու միշտ խնդացնելով : Իւր գործերն ժողովրդեան կողմէ մեծ ընդունելութիւն գտան : Իրաւ , թէ և քիչ մը խիստ երեւցաւ իւր ոճն ոմանց փափկալուր ակննջաց , սակայն ամենքն ակործով կը կարգային ու պիտի կարգան տարիներ : Ընթերցանութեան սէրն արծարծելով տարածելով ժողովրդեան ամէն խաւերուն մէջ , Պարոնեան առաւել նպաստեց Հայոցս մտաւոր շարժման քան ուրիշ շատեր իրենց տասնեակ հատոր չոր ու ցամաք բանաստեղծութիւններով , մեղիքական ձանձրառիթ գործերով : Եւ գիտէ՞ք ինչպէս կը հեղինակէր Պարոնեան , Ամենուն յայտնի է թէ իւրաքանչիւր ամսոյ մէկին հրապարակ կ'ընէր Խիկար , սակայն քիչեր , շատ քիչեր : Գիտեն թէ քանի՞ օրուան մէջ կը խմբագրուէր այն : Ամսագրիսոյն 3-4 օր կայ և տակաւին պատրաստ յօդուած մը չը կայ , հրատարակիչն մարդ կը զրկէ Պարոնեանին աղաչելով որ պատրաստ յօդուածներն ապա . այդ ժամանակ միայն Ազգային Ջոզերու հեղինակն կը մտածէ թէ Խիկարին յօդուած հասցնել պէտք է : Ուստի գրիչը ձեռք կ'առնու , այնքան արագութեամբ սպիտակ թղթին վրայէն կը սահի գրիչն որ կարծես բերանացի գոյ ըրած է գրելիքն , և գրածը շատ քիչ անգամ կը սրբագրէր , կ'աւերէր : Երեւակայեցէք 32 երես Խիկար՝ Պարոնեան միայնակ 2-3 օրուան մէջ կը գրէ : Վկայ տպարանապետ Պէրպէրեան է՝ ֆէնտին : Այդ եթէ այս տեսակ հանճար մը , բոլորովին ազատ ընտանեկան ու նիւթական հոգերէ , յարմար միջավայրի մէջ միայն գրականութեամբ զրազէր , ի՞նչ հրաշակերտներ չը պիտի արտադրէր : Այսպիսի եղական հանճար մ'էր Պարոնեան , այո՛ , որու գառն մահուամբ երգիծարանական աթոռը թափուր կը մնայ Հայ գրականութեան մէջ : Մինչև ցերեք . մինչև ցկատարած աշխարհի , կ'ըսեն յոռետեսք . ո՞վ գիտէ , գոյց է իրաւունք ունին :

Մեռա՛ւ Պարոնեան . բայց ինչպէ՞ս — գըրեթէ անոք , անօգնական . քանի՞ կրթասէրք ու ազգասէրք պատասխանեցին այն հրաւէրին զոր նորա հիւանդութեան միջոցին կարգացին Հայ թերթեր : Տեղն է հոս յիշել ազգային նշանաւոր բանաստեղծին մէկ ոտանաւորն , փոխելով առաջին տողը :

Հիւանդացաւ , խեղճն անկար ,
կարօտ եղաւ մեր օգնութեան ,
Դրամ հաւաքեցինք փոսի համար ...
Կաւ էր երբէք քան անապան :
Եւ արդարեւ ի՞նչ ըրինք խեղճին — ի՞նչ ըրաւ Ազգէն հաւաքարար իւր արի զուակին հա-

մար — Թաղման հանդէսը կատարեց և որոշեց միայն նպաստ հաւաքել նորա որոց համար : Գնա՛ մեռիւր եկու սիրեմ . միշտ այսպէս եղած է : Միտաքեան անուամբ փնթի մը մեռաւ , պսակ , գովեստ , ներքող . longs d'une toise qui s'étendent d'ici jusqu'à Pontoise չուայլեցին առանց ամաչելու , և անգին չը գտնուեցաւ պաշտօնական մարմին մը , անհաս մը որ պսակ մը դնէր անմահն Պարոնեանի վրայ , թէ և նորա գործերն են իւր անթառամ պըսակներն :

Դառն ճշմարտութիւններ յայտնել դժուար է յաճախ ու բազմաց անկարելի . ըստ մեղ , մեծ ոճիր է սակայն պահել , ծածկել զայնս . այսպէս կ'ըմբռնէր նաև ողբացեալ Պարոնեան , այսպէս կը հասկնան ողջախոհք : Շատեր դառն ճշմարտութիւններ սքողել , տարբեր գոյներով զայնս նկարագրել ազգասիրութեան գործ , խիստ մեծ գործ կը համարին , ուստի և կը ջանան որքան կարելի է պարօրել զայնս : Այս կարգի մարդիկ անդէպ ու անպատեհ թերեւս նկատեն մեր սոյն դիտողութիւններն , առարկելով թէ կրնան սոքա հէգ Պարոնեանի ազգականաց ու բարեկամաց անձնասիրութիւնը վիրաւորել , ազգին արժանապատուութեան դպչիլ . բայց՝ ինչպէս ըսինք՝ սխալ կը խորհին այդպիսիք և յաճախ յանցաւորներն են որ այդպէս կը մտածեն : Թանձնաժողով մը կազմուեցաւ ծանօթ ազգայիններէ ի նըպաստ ողբացեալ երգիծարանին կրկնապէս այրեացեալ այրոյն և երկու որոց ազգային հանգանակութեան մը ձեռնարկելու համար : Լաւ . ուրախ եմք , բայց նօթիին հաց , մերկին զգեստ , անուսին ուսուսն հայթայթել ամէն քիչ շատ կիրթ անձի պարտքն է : Գրիտոս հազար ինը հարիւր տարի առաջ արդէն այս պատուէրը քարոզեց : Ազգն ու գրականութիւնն ուրիշ աւագ պարտք մը կը դնեն Թանձնաժողովին վրայ . պէտք է ամենէն առաջ մահարձան մը կանգնել , զի այսօր իսկ կը վախնամ թէ այն սգակիր խումբն որ հետեւեցաւ Պարոնեանի դադաղին նորա ցլետին բնակարանն , մեռելաթաղն , գերեզմանատան պահապանն իսկ վարանին որոշելու այն հողակոյտն որ կը ծածկէ Ազգային Ջոզերու հեղինակի վաստակարեկ մարմինը : Թո՛ղ պատմելով Պարոնեանի կեանքն , անփառասէր գործերն փառաւոր , Թանձնաժողովն հրաւէր կարդայ Ազգին . Թող ամէն ոք իւր շրջանին մէջ մասնակցի Թանձնաժողովոյն աշխատութեանց , այն ժամանակ Թանձնաժողովն իւր պարտքը կատարած կ'ըլլայ Ազգին ու պատմութեան առջև և մահարձանը կը կանգնի : Օ՛ն ուրեմն ի գործ : ՆԱՐԷԻՍ

ԻԼՍԿԻԼՏԱՐ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հասարակ և տասնորդական կոտորակներու վրայ կարևոր գիտելիքներ , բազմաթիւ բազմատական ցուցակներով ներկայացած ընդհանուր ազգաց չափական դրութիւններ , Փողերանոցի , Սակարանի , Պօլսոյ և Զմիւռնիոյ առևտրական սովորութիւններ , նոյնպէս առևտրական բազմաթիւ համեմատական գործողութիւններ լուծելու , մասնաւորապէս տոկոսաւոր ընթացիկ հաշուոց վրայ ընդարձակ բացատրութիւններ պարունակող սոյն ընտիր և դիւրուսոյց Թուաբանութիւնն որ եօթը մասերէ և 240 էջերէ կը բաղկանայ , գեղեցիկ կազմեալ կը վաճառուի Ն . Կ . Պէրպէրեանի տպարանն . Գին 8 դրուէ :

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Արրահամ աղան անգիւտ անձ մ'է խաղի մէջ , որչափ ալ կորսնցնէ՝ չբարկանար , պաղարեամբ կը շարունակէ խաղն առանց կծու ակնարկութիւններ ընելու իւր խաղակցին : Արրահամ աղային հակապատկերն է Տիմոթէոս աղան որ ստատիկ կը բարկանայ երբ բախտը իրեն չժպտի խաղի մէջ :

Արրահամ աղան չէր ճանչնար Տիմոթէոս աղան , ոչ ալ Տիմոթէոս աղան կը ճանչնար Արրահամ աղան , երբ օր մը զրօսարանի մէջ իրարու հանդիպեցան և Տիմոթէոս աղան հըրաւիրեց Արրահամ աղան պէզբի խաղալու :

— Արրահամ աղա , եկուր քեզի հետ բարթի մը պէզբի խաղանք :

— Այսօր ժամանակ չունիմ :

— Կաղաչեմ , բարթի մը խաղանք , ժամանակ կանցունենք :

— Շնորհակալ եմ , թող մնայ այսօր :

— Խաղանք խաղանք սա թուղթերը բեր ծօ :

— Գործ ունիմ , չեմ կրնար խաղալ :

— Շուտ մը կը լմնայ չուտ ըրէ ծօ աղէկ թուղթերէն բեր :

Արրահամ աղան չկրնար դիմադրել :

— Մէյմէկ խահուէի խաղանք , Արրահամ աղա :

— Շատ աղէկ :

— Կտրէ նայինք դուն պիտի տաս տուր նայինք խաղի մէջ ես բախտ չունիմ ամա , փորձենք :

Կ'սկսին խաղալ : Տիմոթէոս աղան անանկ շարժումներ և ձեւեր կ'ընէ որ բարկութիւն կը յայտնեն , երբեմն քթին տակէն կը մումբուայ և ծուռ ծուռ կը նայի Արրահամ աղա , յին որ կը վաստկի խաղը :

— Դուք վաստկեցաք լաւ տո՛ւր նայինք :

— Առէ՛ք :

— Աս ի՛նչ անճոռնի թուղթեր տուեր ես , աղբար , կարծես զատեր զատեր գէշ թուղթերը տուեր ես :

— Դուք կտրեցիք :

— Զեմ ըսեր թէ ես չկտրեցի խաղացէք :

— Վերուցէք :

— Աս ինչ գէշ թուղթ կը քաշեմ կոր , աղբար :

— Բիքա քօղ քառասուն :

— Աղէկ թուղթերը դուն ես առեր :

— Զորս ասօ հարիւր :

— Գիտեմ իմ բախտս :

— Բիքա տամա քառօ ֆանթի յիսուն :

— Ասչափ աղէկ թուղթ քաշել առաջին անգամն է որ կը տեսնամ կոր :

— Երկու հարիւր յիսուն :

— Վայ չուշանորդի թուղթ վայ :

— Երկու հարիւր յիսուն :

— Որչա՞փ գրեցիր աղբար եօթը հարիւր մօտեցեր ես դեռ նոր սկսանք խաղալ , կ'աղաչեմ , ուշադրութիւն ըրէ՛ :

— Քու առջեւդ կը գրեմ կոր , եղբայր չորս ասօ հարիւր :

— Վայ թշուառական թուղթ վայ հեղք քան մը բացինք որհնեալ է Աստուած :

— Երկու հարիւր յիսուն :

— Պէ աղբար քիչ մը կամաց խաղա որ ես ալ տեսնամ , ինչ է ան զըվըր զըվըր երկու հարիւր յիսուն կըսես կը բանաս ինչո՞ւ համար երկու հարիւր յիսուն կ'ըլլայ կոր եղբր ի՞նչ ըսել է զաթը իմին թուղթս գէշ կուգայ կոր :

— Հինգ հարիւր.....

Տիմոթէոս աղան ձեռքի թուղթերը սեղանին վրայ կը նետէ և Աբրահամ աղային դառնալով.....

— Գեղի կամաց խաղա՛ ըսինք, աղբար, միտնուս զիս բարկացնելու համար կընես կոր..... ես քեզի ընեմ նէ հօշոյ կուգայ:

— Ի՞նչ կընեմ կոր աղբար.....

— Տահա ի՞նչ պիտի ընես աղբար..... Ի՞նչ էն հինգ հարիւր կը բանաս կոր եղբոր.....

— Ծանրմ առաջ աղջիկ մը և պաճախ մը չունէի՞.....

— Ունէիր մի չունէիր մի ես ի՞նչ գիտեմ աղբար..... մարդուս գլուխը խելք կը ձըգեմ կոր մի ես..... իմ խաղիս մի նայիմ, քու կինիդ մի նայիմ..... աճէլէով, հիէթով խաղալ մը ունիս, կարծես քի բանակի մը գլուխ անցեր ես ու մեծ յաղթանակ կը տանիս.....

— Վերջէն պաճախ մը քաշեցի.....

— Երբ քաշեցիր, անանկ աճէլէ կը խաղաս որ.....

— Վերջն ալ աղջիկ մ'առի.....

— Ես չտեսայ..... ինչ է նէ աղբար, գրէ, ուղածիդ չափ նշանակէ՛..... չատ աղէկ աղբար..... Թուղթ առ.....

Աբրահամ աղան կը նեղուի և չուրջը գլուխը շրջելով կը նայի, որք շրթունք կը խածնեն հասկնալու համար իրեն որ համբերէ:

— Չխաղա՞ս, կը պօռայ Տիմոթէոս աղան, չխաղա՞ս..... ինչո՞ւ ծանր կը խաղաս կոր:

— Հազար, կ'ըսէ Աբրահամ աղան:

— Հազար, հազար..... մութիւն աս թուղթին մէջ բան մը կայ..... դուն թուղթերը կը ճանչնաս կոր, կ'ըսէ Տիմոթէոս աղան և թուղթերը ուժով կը նետէ դէպ ի Աբրահամ աղան:

— Ե՞ս կը ճանչնամ կոր թուղթերը.....

— Ձեմ հասկնար, աղբար,..... չեմ նայիր կոր տէյի ուղածիդ չափ ալ գրեր ես.....

— Աւելի՞ գրեր եմ.....

— Ի՞նչ ըսեմ:

— Ծօ սա թուղթերը ժողովէ ու բեր... գրէ պէ ատամ գրէ՛.....

— Խըյանէթ, ատանկ խօսք մի ըներ:

— Գրէ պէ ատամ, գրէ ըսինք ա՛:

— Գրեմ բայց.....

— (Ոսկ ելնելով պօռալով) Գրէ ըսինք աղբար, գրէ ըսինք... խօսքը չեն երկնցներ... Սեռանկ մէկ շեշտով կըսես կոր որ... Սեռանկ պօռալով) Գրէ խօսք մը չըրինք ա՛, գրէ ըսինք:

— Ըսեք, բայց.....

— (Արթուն վրայ ելնելով) Գրէ, պապամ, գրէ.....

— Ձեմ ըսեր թէ չըսեք... բայց չէր վայելեր որ... Պէ՛տ խօսք մը ըսինք, աղաներ, դուք ըսէք... գրէ ըսինք... ուղածիդ չափ գրէ՛ ըսինք... խօսքն այսչափ չեն երկնցներ..... Աբրահամ աղա, Աբրահամ աղա, թէ որ դուն իմ տեղս ըլլայիր, ինչեր չէիր ըներ արդեօք... զբօսարանը տակնուվրայ կը բերէիր... բայց ես չեմ բարկանար ձեզի պէս... Սեռանկ գրեցի:

— Գրէ ըսինք, այօլ:

— Ինչո՞ւ ըսես, եղբայր:

— (Ջրօսարանի դրան առջեւ պօռալով) Այս մարդը խօսք չհասկնար պէ... գրէ ըսինք այօլ, քու կինն ձեռքէդ բռնող եղա՞ւ, մի գրեր ըսող եղա՞ւ, ինչո՞ւ կերկնցներ խօսքը... Աբրահամ աղային խահուէ մ'եփէ ծօ... վաստկեցար բարթին... խմէ՛ խահուէդ:

... անուշ ըլլայ... չատ աղէկ կը խաղաք կոր... ես չիյտեմ կոր խաղալ... Ի՞նչ ըսեմ տահա... Մի եփեր ծօ... բարթին չլմնցաւ տահա, Չմնցաւ մի՞:

— Եկուր, Տիմոթէոս աղա, սա բարթին լմնցուր, կըսեն ներկայ գտնուողները:

— Պօ՛ւ բան է, աղբար, գիտեմ կոր պիտի կորսնցնեմ... բայց ինչ է նէ խաղանք մեզի ուրիշ թուղթ բեր ծօ... Թուղթերը կը փոխուին: Կ'սկսին խաղալ:

— Կաղաչեմ որ կամաց կամաց խաղաս, Աբրահամ աղա:

— Ծատ աղէկ:

— Կտրէ:

— Կտրեցի:

— Հրամանեցէք... խաղացէք:

— Առէ՛ք:

— Սա պօշ թուղթերը տանք նայինք:

— Հրամանեցէ՛ք:

— Նայինք այս անգամ ինչ քօղ պիտի բացուի:

— Դեռ յայտնի չէ:

— Կարծես միշտ միևնոյն թուղթերն են:

— Բառօ քօղ... քառասուն... Կէնէ սկսաւ:

— Ութսուն... Անգամ մը սկսի նէ՛ վերջը չբերեր որ:

— Ինձի ալ կարծես քի ինտուրնա աղէկ թուղթ կուգայ կոր... Ատանկ է, մէկ կողմին գէշ գայ նէ՛ միւս կողմին աղէկ կուգայ:

— Հարիւր... (Ձեռքերը բացալով) Այս որչափ թուղթ աղբար... այսչափ թուղթով մամիկս ալ կը խաղայ իմին... Երկու հարիւր յիսուն... զարմանալի է այս թուղթը... Անանկ է... աճէմին աղէկ թուղթ կուգայ կ'ըսեն, այն թուղթը ինձի գայ նէ՛ քսան չես կրնար գրել դուն:

— Զիչք է... Տիմոթէոս աղա, սա թուղթը նետէ կըսէ Տիմոթէոս աղային քովը նստողներէն մին:

— (Թուղթերը նետելով եւ պօռալով) Մի խառնուիք աղբար, մի՛ խառնուիք պէ, մի խառնուիք պէ... զաթը ինձի գէշ կուգայ կոր, դուրսէն մի ըսէք... մի ըսէք պէ... մի ըսէք պէ... մի խառնուիք պէ... քանի՞ անգամ կ'ըսեն մէկ խօսքը, աղբար... մի խառնուիք պէ... էօֆ... ասոր համար է որ բազմութեան մէջ խաղալ չեմ ուզեր ա:

— Երկու հարիւր յիսուն... Ի՞նչ երկու հարիւր յիսուն պէ դուն ալ... Թուղթը ես պիտի քաշէի... Ես պիտի քաշէի... Ի՞նչ չուտ երկու հարիւր ըրիր... Յիսուն... Խաղէն խաղար չունիս ամա, աղօթք ըրէ որ թուղթ կուգայ կոր: Ինչո՞ւ համար առաջ յիսունը չբացիր որ վերջէն ալ հինգ հարիւր ըսէիր... չիյտես կոր ամա... Թուղթը կօգնէ կոր... Հինգ հարիւր..... Հինգ հարիւր մի..... ելէք քովէս քիչ մը ճանրմ..... քիթս կը մտնէ կոր նէ... ձեռքս չեմ կրնար կոր երկնցներ որ թուղթ նետեմ, հեռացէք քիչ մը... անդին գացէք... էօֆ... Ի՞նչ հինգ հարիւր է աղբար... հինգ հարիւրը ուսկից հանցեր... քանի՞ աղջիկ ելաւ... քանի՞ պաճախ ելաւ... այս խաղին խելքս չպառկիր կոր վէսէլամ... Երկու հարիւր յիսուն.....

— Վաթսուն մ'ալ բանանք նայինք.....

— Հարիւր.....

— Գսան ալ մէկ բանանք..... օհ, օհ, օհ..... ասանկ չնչին թուանշաններով..... աղբար, երկու սա տեղերին փոխենք:

— Փոխենք.....

— Թուղթ առ.....

— Առէք..... երկու հարիւր յիսուն.....

— Դեռ կայ այս թուղթերուն մէջ.....

— Հազար.....

— (Կից մը քալով սեղանին) Վաղ անցիր Աստուածդ սիրես նէ..... ասանկ խայտառակութեամբ խաղ չխաղացուիր..... աղբար, թուղթը ո՞վ տուաւ:

— Դուն տուիր:

— Անանկ է նէ թուղթը դուն պիտի նետէիր.....

— Ես նետեցի ես:

— Ոչ, ես նետեցի:

— Սխալ է:

— Ես նետեցի:

— Ոչ:

— Այո՛:

— Ոչ, Ո՞վ նետեց, աղաներ, դուք ըսէք:

— Իրաւ որ մոռցանք:

— Դուն նետեցիր, աղբար, իրաւունք ունիս, յանցանքն իմն է..... իմն է որ չգիտեցած չտեսած մարդուս հետ թուղթ կը խաղամ կոր.....

— Ինչո՞ւ ծանր խօսքեր.....

— Ի՞նչ ծանր խօսք աղբար... յանցանքը իմն է կըսեմ կոր... ա՛ս ալ ծանր խօսք է... ես այս խաղը խաղալուն կերպը չեմ գիտեր կոր, լմնցաւ..... վայ չունշանորդի թուղթ վայ, վայ անիծից արմատ թուղթ վայ, այսչափ ալ ձախորդութիւն..... կարծես կը հալածէ կոր զիս աղբար..... գետնին տակն անցնիմ թէ որ մէյ մ'ալ այս պէզիքը խաղամ նէ..... աղբար ես խաղի մէջ բնաւ չեմ բարկանար..... բայց անանկ պարագայներ կան որ մարդս ինքնիրմէ կեկայ:

— Ծատ իրաւունք ունի Տիմոթէոս աղան, ըսաւ ներկայներէն մին, ինձի ալ գէշ թուղթ մ'եկաւ օր մը, մաղ մնաց որ կռիւ պիտի ընէի.....

— Եթէ այս թուղթն ուրիշի մը գար, մեծ փոթորիկ մը կ'ըլլէր այսոր հոս, յարեց ուրիշ մը:

— Ծատ քիպարութեամբ վարուեցաւ Տիմոթէոս աղան շիտակը, միմուայ երրորդ մը:

— Եթէ Տիմոթէոս աղային տեղ ուրիշ մը ըլլար՝ Աբրահամ աղան շատուց ծեծը կերած էր:

— Շիտակը ես չեմ բարկանար երբ կորսնցնեմ, պատասխանեց Աբրահամ աղան:

— Հրամանքնի՞ք չէք բարկանար, հարցուց Տիմոթէոս աղան:

— Այո՛:

— Ետեւ ետեւ երկու հարիւր յիսուն բանամ, հինգ հարիւրներ բանամ..... հազար բանամ ու չես բարկանար հէ՞..... ճանրմ, ձըգեմ հիմա պարապ խօսքերը..... բարթին լմնցա՛ւ:

— Ձէ տակաւին:

— Լմնցենք ուրեմն..... նորէն թուղթ տանք..... դուն տո՛ւր..... ոչ, ոչ..... ինձի տո՛ւր ես տամ..... չէ, չէ..... դուն տո՛ւր..... հէ՞ է..... կեցիր աս անգամ ես տամ..... տո՛ւր աղբար տո՛ւր, դուն տո՛ւր..... Ի՞նչ կըսես.....

— Որոշուեմ տո՛ւր:

— Դուն տուր, ի՞նչ տամ աղբար:

Երկու հարիւր յիսուն.....

Վաթսուն մ'ալ բանանք նայինք.....

Հարիւր.....

Գսան ալ մէկ բանանք..... օհ, օհ, օհ..... ասանկ չնչին թուանշաններով..... աղբար, երկու սա տեղերին փոխենք:

Փոխենք.....

Թուղթ առ.....

Առէք..... երկու հարիւր յիսուն.....

Դեռ կայ այս թուղթերուն մէջ.....

Հազար.....

(Կից մը քալով սեղանին) Վաղ անցիր Աստուածդ սիրես նէ..... ասանկ խայտառակութեամբ խաղ չխաղացուիր..... աղբար, թուղթը ո՞վ տուաւ:

Դուն տուիր:

Անանկ է նէ թուղթը դուն պիտի նետէիր.....

Ես նետեցի ես:

Ոչ, ես նետեցի:

Սխալ է:

Ես նետեցի:

Ոչ:

Այո՛:

Ոչ, Ո՞վ նետեց, աղաներ, դուք ըսէք:

Իրաւ որ մոռցանք:

Դուն նետեցիր, աղբար, իրաւունք ունիս, յանցանքն իմն է..... իմն է որ չգիտեցած չտեսած մարդուս հետ թուղթ կը խաղամ կոր.....

Ինչո՞ւ ծանր խօսքեր.....

Ի՞նչ ծանր խօսք աղբար... յանցանքը իմն է կըսեմ կոր... ա՛ս ալ ծանր խօսք է... ես այս խաղը խաղալուն կերպը չեմ գիտեր կոր, լմնցաւ..... վայ չունշանորդի թուղթ վայ, վայ անիծից արմատ թուղթ վայ, այսչափ ալ ձախորդութիւն..... կարծես կը հալածէ կոր զիս աղբար..... գետնին տակն անցնիմ թէ որ մէյ մ'ալ այս պէզիքը խաղամ նէ..... աղբար ես խաղի մէջ բնաւ չեմ բարկանար..... բայց անանկ պարագայներ կան որ մարդս ինքնիրմէ կեկայ:

Ծատ իրաւունք ունի Տիմոթէոս աղան, ըսաւ ներկայներէն մին, ինձի ալ գէշ թուղթ մ'եկաւ օր մը, մաղ մնաց որ կռիւ պիտի ընէի.....

Եթէ այս թուղթն ուրիշի մը գար, մեծ փոթորիկ մը կ'ըլլէր այսոր հոս, յարեց ուրիշ մը:

Ծատ քիպարութեամբ վարուեցաւ Տիմոթէոս աղան շիտակը, միմուայ երրորդ մը:

Եթէ Տիմոթէոս աղային տեղ ուրիշ մը ըլլար՝ Աբրահամ աղան շատուց ծեծը կերած էր:

Շիտակը ես չեմ բարկանար երբ կորսնցնեմ, պատասխանեց Աբրահամ աղան:

Հրամանքնի՞ք չէք բարկանար, հարցուց Տիմոթէոս աղան:

Այո՛:

Ետեւ ետեւ երկու հարիւր յիսուն բանամ, հինգ հարիւրներ բանամ..... հազար բանամ ու չես բարկանար հէ՞..... ճանրմ, ձըգեմ հիմա պարապ խօսքերը..... բարթին լմնցա՛ւ:

Ձէ տակաւին:

Լմնցենք ուրեմն..... նորէն թուղթ տանք..... դուն տո՛ւր..... ոչ, ոչ..... ինձի տո՛ւր ես տամ..... չէ, չէ..... դուն տո՛ւր..... հէ՞ է..... կեցիր աս անգամ ես տամ..... տո՛ւր աղբար տո՛ւր, դուն տո՛ւր..... Ի՞նչ կըսես.....

Որոշուեմ տո՛ւր:

Դուն տուր, ի՞նչ տամ աղբար:

— Որոշում թէ թուղթ :
— Տուր , թուղթ տուր :
— Կորէ :
— Կորեցի :
— Առէք Կողմէս միայն որ չբարկա-
նաք
— Զբարկանամ բարկացող կայ :
— Զիյտեմ և եթէ պիտի բարկանաք ,
չխաղանք
— Մի՛ խաղար աղար , մի՛ խաղար , գա-
թը դուք ասանկ էք , երկու երեք բարթի կը
խաղաք , կը վաստկիք , յետոյ կը փախչիք :
Ո՞վ բարկացաւ ըսենք թէ բարկացայ , ի՞նչ
իրաւունք ունիս բռնանալու իմ վրայ որ չը
բարկանամ , դուք իմ բարկութեան քէ՞յֆն
ես Գնա սըկէց զաթը քեզի պէս մար-
դու հետ խաղալը չլայլեր ինձի : Անպիտան
Աբրահամ աղան կը մտաբերէ Տիմոթէոս
աղային ականջներէն քաշել , բայց քաղաքա-
վարութիւնը կը կասէ անոր ձեռքերը և թոյլ
չընեն որ գործեն : Ի՞նչ պէտք ունիմ , կը
կը հարցնէ ինքնիրեն , նեղուելու նոյն իսկ
այն բանին մէջ որ զուարճացնելու սահման-
ուած է : Ինչո՞ւ այսչափ համբերեմ :
Ամէն յաղթող , ի՞նչ բնաւորութեան տէր
ալ ըլլայ , առաւել կամ նուազ աչք կը գոցէ
պարտեղյն թերութեանց : և այս խաղին մէջ
Աբրահամ աղան իւր համբերութեամբը միշտ
victis honos ըսաւ Տիմոթէոս աղային :
Բայց Տիմոթէոս աղան չլուեր :
— Տեսա՞ք , եղբայրներս , ի՞նչ գէշ թուղթ
եկաւ , ես զարմացայ թէ ի՞նչպէս համբերե-
ցի ինձմէ չէր այդ համբերութիւնը
եթէ Աստուած նոյն պահուն համբերութիւն
չներշնչէր ինձ չէի կրնար դիմանալ
որչափ աղկ կը խաղամ , այնչափ գէշ թուղթ
կուգայ Կարծես թուղթերը վրէժ կը լու-
ծեն ինձմէ և երբ այս վիճակին մէջ Աբ-
րահամ աղան « պիտի բարկանաս նէ չեմ խա-
ղար » կ'ըսէ , իւր պայտալութիւնը կը յայտնէ :
— Ներեցէք , կարծեմ թէ պայտալի չեմ :
— Ես քեզի պայտալի չըմ , պայտալութե-
անդ կը յայտնես ըսի :
Ներկայք կ'ականարկեն Աբրահամ աղային
որ ձայն չհանէ :
— Մարդս քաղաքավարութիւնը ձեռքէ
ձգելու չէ . եթէ դուն քիչ մը քաղաքավա-
րութիւն կամ խիղճ ունենայիր՝ այնչափ երկու
հարիւր յիսուն չէիր բանար արժէքը խաչ-
ուէ մ'է ամա , մարդկութիւնը բարայի վրայ
չէ ինչ որ է աս ալ խրատ մ'ըլլայ ին-
ձի զաթը ձեզի պէս մարդոց բարեւ տալը
յանցանք է :
Տիմոթէոս աղան այս ատենախօսութենէ
ետքը՝ զոր զբօսարանի մէջ պտտելով կընէր՝
դուրս կ'ելնէ նախատալի նայուածք մը նե-
տելով Աբրահամ աղային :
— Ի՞նչ տեսի մարդ է այս , կ'ըսէ Աբ-
րահամ աղան ներկայից :
— Ի՞նչպէս եղաւ որ անոր հետ խաղա-
ցիր , պատասխանեց մէկը , մենք անոր բնա-
ւորութիւնը գիտենք և բնաւ չենք խաղար
հետը , շատ անկիրթ մարդ է :
— Զըլլայ որ ուրիշ անգամ խաղաս , ըսաւ
ուրիշ մը :
Վերջապէս ներկայք հետգնեալ խօսք ա-
ռին հասկցնելու համար Աբրահամ աղային որ
այսչափով դո՛ւր ըլլայ :
Բայց քիչ մը թողունք ասոնք և Տիմո-
թէոս աղային տանը դրան առջև երթանք ու
մոտիկ ընենք :
— Ի՞նչ է աս վիճակը տունին մէջ ո՛չ

կարգ կայ ո՛չ կանոն , ամանները չեն լուաց-
ուած , սենեակները չեն աւելուած , աս լամ-
պան ի՞նչ գործ ունի հոս , բապուճներն ի՞նչ
գործ ունին հոն , վարագուրը պատռած է ,
չէք կարեր , չօճուխին վարտիքները ինչո՞ւ
հոս կախած էք , ինչո՞ւ համար պարսպ տե-
ղը կրակ կը վառէք կոր
— Ինչո՞ւ կը պոռաս կոր , ճանձմ , ի՞նչ ե-
ղար կենէ , պէզի՞ք խաղացիր դարձեալ , ի՞նչ
ըրիր :
— Բան մ'ալ չխաղացի , պէզիք մ'է առեր
անցեր էք մեզք է՞ ուզել որ ամէն բան
կանոնաւոր ըլլայ :
— Ի՞նչ կայ անկանոն չօճուխին վար-
տիքները քօնսօլի վրայ դնենք :
— Զիյտեմ վէրէմ պիտի ըլլամ ձեր
ձեռքէն :
— Տիմոթէոս աղա , Տիմոթէոս աղա , աս
քաղաքաւար բան չէ :
— Պապանձէ :
— Հայրիկ , հայրիկ
— Լռէ՛ շուն
Տղան կ'սկսի լալ :
— Լռէ՛ , հիմայ ականջներդ կը փրցնեմ հա՛ :
Կինը կոշիկները կը հագնի և դուրս կ'ելնէ :
Հետեւինք իրեն :
Շիտակ զբօսարանը կ'երթայ , ներս կը
մտնէ և զբօսարանին տիրոջը ցած ձայնով
հարցում մ'ընելէն և անկից մեծ դժուարու-
թեամբ պատասխան մը կորզելէն ետքը , կ'ուղ-
ղուի Աբրահամ աղային
— Խօսիսձաման մարդ ես եղեր վը-
րասայի պէս պիտի ունիս , չե՞ս ամէնայ
դուն , չխախտ , չե՞ս խախտ չամէնայ , չիյ-
տե՞ս որ իմ էրիկս կը բարկանայ երբ որ կոր-
սընցնէ խաղին մէջ և խելքն ալ կը կորսնցնէ ,
չխախտ քեզի , իրաւունք չունիմ հիմայ քու
պիտիք փրցնելու , պատասխան տուր :
Աբրահամ աղան արձան կը կտրի :
— Սըւոր նայէ մէյ մը Կարծես թէ ու-
րիշին կը խօսիմ , չպատասխանե՞ս , իշու չափ
եղեր ես և խելք չե՞ս ընէր կոր որ
— Սխալեցաւ , տիկին , սխալեցաւ , մէյ
մ'ալ չընէր , կ'ըսէ զբօսարանի տէրը :
— Եթէ անգամ մ'ալ իմանամ որ հետը
թուղթ խաղացեր ես , իրաւ որ միտերդ կտոր
կտոր կը փրցնեմ :
— Մէյ մ'ալ չընէր , չընէր , Աբրահամ
աղա , բարտօն ըսէ տիկինին :
— Բարտօն , տիկին , բարտօն :
— Այօլ , գիտէք կոր քի կը բարկանայ ,
տունը տակն ու վրայ կ'ընէ նէ , քիչ մը սայղը
ըրէք , մեղքեցէք ինձի , ինձի ալ մեղք է ,
քա՛ վայ պանա :
— Գնա՛ , տիկին , գնա՛ , հոգ մի ընէր :
Աբրահամ աղան բերանը չբանար — որով-
հետեւ մարդիկ կան որ երբ բարկանան , չեն
կրնար խօսիլ — քիչ մ'ալ կը նստի և յետոյ
կը մեկնի , սակայն ուխտ կ'ընէ որ մէյ մ'ալ
մէկու մը հետ չխաղայ , մինչեւ որ թաղին
թաղական խորհրդէն տրուած վկայագիր մը
չներկայացուի իրեն : ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Իւսկիւտարու Մեղպուրեան աղջկանց վար-
ժարանի ԺԲ . տարեշրջանի քննութիւնը ըս-
կըսած են և կը կատարուին ըստ հետեւեալ
կարգացոյցի , ժամ 9 Էն 12 և 2 Էն 5 :
ԴՇ . 19 յունիս . Կէս օրէ առաջ՝ Հայերէն
(Գ . տարի) . Շարադրութիւն Հայերէն . (Գ . և

Ե . տարի) . Հայերէն (Գ . տարի) . — Կէս օրէ յե-
սոյ՝ Աշխարհագրութիւն (Բ . տարի) . Դիցարա-
նութիւն (Mytologie) (Ե . տարի) . Դժադի-
տութիւն :
ԵՇ . 20 յունիս . Կէս օրէ առաջ՝ Հայերէն
(Ա . տարի) . Շարադրութիւն Հայերէն (Բ .
տարի) . Առողջաբանութիւն . (Գ տարի) : —
Կէս օրէ յեսոյ՝ Շարադրութիւն Հայ . (Ա . տա-
րի) . Բարոյագիտութիւն (Ե . տարի) . Զե-
ւագիտութիւն (Գ . Դ . եւ Ե . տարի) :
ՈԻՐ . 21 յունիս . Կէս օրէ առաջ՝ Explica-
tion (Դ . և Ե . տարի) . Գաղղիերէն (Բ . տարի) .
Աշխարհագրութիւն (Գ . տարի) : — Կէս օրէ
յեսոյ՝ Կրօնագիտութիւն (Ա . տարի) . Բնագի-
տութիւն (Դ . եւ Ե . տարի) . Արտասանու-
թիւն Հայ . և Գաղղ . (Դ . տարի) :
ԲՇ . 24 յունիս . Կէս օրէ առաջ՝ Գաղղիե-
րէն (Դ . տարի) . Հայերէն (Բ . տարի) . Գաղղիե-
րէն (Դ . տարի) : — Կէս օրէ յեսոյ՝ Իմաստա-
սիրութիւն (Ե . տարի) . Ընդհանուր Պատմու-
թիւն (Բ . տարի) . Գրահաշիւ (Ե . տարի) :
ԳՇ . 25 յունիս . Կէս օրէ առաջ՝ Շարադ-
րութիւն Գաղղիերէն (Դ . և Ե . տարի) . Ու-
սումն Բարոյականի (Բ . տարի) . Գաղղիերէն
(Ա . տարի) : — Կէս օրէ յեսոյ՝ Ընդհանուր
Պատմութիւն (Գ տարի) . Արտասանութիւն
Հայերէն և Գաղղ . (Բ . տարի) . Դաշնակ :
ԴՇ . 26 յունիս . Կէս օրէ առաջ՝ Թուա-
բանութիւն (Ա . տարի) . Հայերէն (Ե . տարի) .
Պատմ . Հայ . Մատենագրութեան (Դ . տարի) .
Կէս օրէ յեսոյ՝ Գաղղիերէն (Ե . տարի) . Թուա-
բանութիւն (Գ . տարի) :
ԵՇ . յունիս . Կէս օրէ առաջ՝ Պատմ . (Ա .
տարի) . Շարադրութիւն Հայ (Գ . տարի) . —
Կէս օրէ յեսոյ՝ Մարդակազմութիւն (Բ . տա-
րի) Ընդհանուր Պատմ . (Դ . տարի) . Ուսումն .
Բարոյականի (Գ . տարի) :
ՈԻՐ . 28 յունիս . Կէս օրէ առաջ՝ Թուա-
բանութիւն (Բ . տարի) . Արտասանութիւն Հա-
յերէն (Ա . տարի) . Թուարանութիւն (Գ . տա-
րի) : Կէս օրէ յեսոյ՝ Երկրաչափութիւն (Դ . և
Ե . տարի) . Աշխարհագրութիւն (Ա . տարի) .
Տիեզերագրութիւն (Ե . տարի) :
Դպրոցատէր Տիկնանց Ընկերութեան վար-
ժարանի տարեկան հարցաքննութիւնը պիտի
սկսին յառաջիկայ երկուշաբթի , 24 յունիս , և
պիտի տեւեն մինչև ուրբաթ , հինգ օր , ա-
ռաւօտեան ժամ 2 Էն 5 և միջօրէին յետոյ
ժամ 6 Էն 9 ըստ Թրքաց :

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

ԵՐԶՆԿԱ , 8 յունիս 1891 . — Հարսանիքը
(խզամուխ) որ երկու ամիսներէ ի վեր երկզա
ևս այցելած էր , ցարդ բաւական կոտորած
ըրած է : Միայն Հայոց մէջ 100ի չափ մա-
նուկներ այս համաճարակին զոհ գնացած են :
Այս օրերս բաւական թեթեւալ սկսած է :
Աստ կան քանի մը հանքային ջուրեր , որ կը
հաւասարին Պրուսայի Զիլիի ջուրին : Դըժ-
բախտաբար ժողովուրդը չ'օգտուիր սոյն ա-
ռողջարար ջրերէն ինչպէս յեւրոպա , ուր մեծ
հաստատութիւններ կանգնուած են և ժողո-
վուրդը գունդագունդ կը դիմէ , մանաւանդ
ամառուան տաք եղանակին մէջ : Քաղաքէս մէկ
ժամ հեռավորութեամբ Բէմալի կիրճին մէջ
Եփրատի ճիւղ եզերքէն կը բղխի երկաթախա-
ռըն ջուր մը (Eau minerale gageuse ferro-
gineuse) որ կը յիշեցնէ Գորսիքայի Օրէցա
ըսուած առողջարար հանքաջուրը : Վսեմ . Բէ-
լիտ Մէհմետ Զէքի փաշայի շնորհիւ յուսալի

է որ՝ այս բարեհամ ջուրերէն օգտի ժողովուրդը, որովհետեւ ինչպէս որ աւերակ վիճակի մէջ եղող ջրմուկ մը ի նորոյ մաքրել տալով՝ յատուկ բաղանիք և սենեակներ շինել տուաւ, մտադիր է նաեւ այս հանքաջրոց մէջ ալ մէկ մէկ բնակարաններ շինել տալ, որ ժողովուրդը կարենայ հանգստորէն յաճախել։ Այս տարի տեղացած առատ անձրեւներուն շնորհիւ հունձքերը լաւ արգելանք տալ կը խոստանան։ Խաղողի հունձքն ալ առատ է։ Զմեռը որ խիստ երկարատեւ եղաւ, արտասովոր սղութիւն պատճառեց։ միսի գինը տակաւին 3 դրուշ է, մինչդեռ ուրիշ տարիներ այս եղանակին մէջ կ'արժէր հին օրսան 60-65 փարա։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաւորութիւնք. — Գոնեայի նահանգին վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ անուանեցաւ Օսման Ֆարքէֆէնտի, նախորդ ընդհ. դատախազ վերաքննիչ ատենին վանայ։ — Գոնեայի վերաքննիչ ատենին ընդհ. դատախազի օգնական անուանեցաւ Լուիսթի պէյ, նախագահ պատժական դատարանին Լազիսթանի։ — Լազիսթանի պատժական դատարանին նախագահ անուանեցաւ Էօմէր Լուիսթի Էֆէնտի, նախկին նախագահ պատժական դատարանին Մշոյ։

— Հոռմայ Ս. Պապը Ս. Սիւլէսք պատուանշանի Ե. աստիճանը նուիրած է Պոլսոյ ներքին ապրանքային մաքսատան գրքերու և հանդէսներու քննիչ Ոսկիեան Գրիգոր Էֆէնտիին։

— 1291—92ին Գաւթամուրի ի յնէպօլու գաւառակին մէջ ծագած սովի պահուն, հանրային օգտին վերաբերեալ սնունդի դրամագլխէն 80 000 դրուշի արմաթք առնուելով՝ կարօտ ժողովրդեան բաշխուած էր և նոյն գումարին մինչև 1295 թուականին վերջն եղած տոկոսներն անվճար մնացած էին, ժողովրդեան անկարողութեան պատճառաւ։ Արդ ըստ որոշման Պետական խորհրդոյ ու նախարարաց խորհրդոյ, որ կայս. Իրատէով վաւերացեալ է, այդ տոկոսը չը պիտի առնուին այլ ևս, իսկ մայր դրամը մաս առ մաս պիտի գանձուի։

— Ի Պրուսա հաստատեալ երկրագործական գործնական վարժարանի կազմակերպութեան, ինչպէս և ապագային համար հարկ եղած 283.000 դրուշի ծախքը պիտի հայթայթուի տեղւոյն երկրագործական դրամատան մասնաճիւղերուն հանրօգուտ շինութեանց յատկացեալ բաժինէն, յետագայ տարիներու չահէն հատուցուելու պայմանաւ։

— Անգլիացի դրամատեսարց ընկերութիւն մը մտադիր է, կ'ըստի, Կ. Պոլսոյ չրջակայքը զբոսական շոգեմակոյկներ բանեցնելու արտօնութիւն խնդրել։

— Ցարդ 70.000 ոսկւոյ մանր դրամ պատրաստուած է Արքունի Փողերանոցին մէջ, և տակաւին 30 000 ոսկւոյ ևս պիտի պատրաստուի մինչև ներկայ ամսոյ վերջը։

— Ծովային առևտրական դատարանէն սընանկ հաշակուած ու բանտարկուած են ի Պոլիս, Պէյլիք ելլող խան հաստատեալ վաճառական ու յանձնակատար Յակոբ Տէր Ղազարեան և ի Գաղա զիւղ հաստատեալ մտավաճառ Եօրիկ Թանաշ։

— Մայրաքաղաքիս կալուածատուութէն պարտք ունեցող պաշտօնէից անվճար տուրքը, ըստ կայս. Իրատէի, իրենց ամսաթոշակներէն վար պիտի դրուի, առանց կանխաւ անոնց հաւանութիւնը առնուելու։

— Կարնոյ մէջ գտնուած թնդանօթածիլ գործերը նշանաւորութեան փորձեր կատարելով, յաջող արդիւնքներ ունեցեր են։

— Զինուորական բարձրագոյն նախարարութարան մը հաստատուել է ի վան։

— Ոստիկան գինւորաց 1307ի ելմոացոյցին վրայ 362.400 դրուշի յաւելում մը տեղի պիտի ունենայ, Կազէի ոստիկանաց թիւն աւելցնելով՝ տեղւոյն Աշիրէթներու վիճակին նկատմամբ բարենորոգումներ ի գործ դնելու։

և անոնց տուրքը կանոնաւորապէս գանձուելու համար։

— Ի Զմիւռնիա, վեց փաստաբանք արգիւտած են իրենց արհեստն ի գործ դնելէ, չ'ունենալով վկայական։

— Ի Եանեա, հեղինացի աւագակաց խումբեր լեռը տարեր են աւագակներ հալածելու պաշտօն ունեցող Միշօ անուն մարդու մը տղան և մեծաքանակ փրկանք կը պահանջեն հօրմէն։

— Սելանիկի հեռագրատան և թղթատարական աւանդներու պաշտօնեայ Ազիզ Էֆ. 39000 դրուշի գումար մը իւրացուցած լինելով, իրեն նկատմամբ պէտք եղածն ի գործ դրուած է, կ'ըսէ Սապան։

— Թաղապետութեան Զ. չրջանակին մէջ հաստատուելիք 30 միգրարանց շինութիւնք ի մօտոյ կ'սկսին։ Ծախք հաշուուած է 752 ոսկի։ Տէրքոսեան ջրի ընկերութեան հետ բանակցութիւն սկսուած է նոյն միգրարանց համար հարկ եղած ջուրը հայթայթելու համար։

— Այտընի նահանգին ներկայ տարւոյ տասանորդի տրոց վարձակալութեան գնոյն վրայ 120 հազար ոսկւոյ յաւելում մ'եղած է ցարդ։

— Քէրպէլայի Գալիպ Սէյտ Ահմէտ Էֆէնտի, որ իրրեւ ոճրագործ ամբաստանուած և փախած էր, Պաղատուի մէջ ձերբակալուելով բանտարկուել է։

— Իսկէնտէրունի ծովախորշէն եկող ուղեւորք Սիւէտիյէն մինչև Կարաթաշ Պուրնու, հնգօրեայ քարանթենայի պիտի ենթարկուին՝ Բաղդադէն մաքրանոցին և առժամապէս Պէրութի մաքրանոցին մէջ։

— Լա Թիւրքի լրագիրն անպայման կերպիւ դադարման դատապարտուեցաւ՝ գրաքննիչ պաշտօնէին պատուէրներուն չը հնազանդելով չարամիտ հրատարակութիւններ ընելուն համար։

— Ըստ Սապանի, Ռուսիացի վեց տնուոր գաղթականք բնակութիւն հաստատած են ի Կարին։

— Հանրային Պարտուց վարչութեան աւաջարկուած է օտար երկիրներու մէջ հրատարակեալ և մայրաքաղաքիս մէջ վաճառուած լրագրաց վրայ ևս դրոշմաթուղթ փակցընել, տեղական լրագրաց նման։

— Կայս. բժշկական վարժարանէն Դեղագործի վկայական ստացան Յակոբ Էֆ. Պոյաճեան, Տիգրան Էֆ. Միսքճեան, Պաղատասար Էֆ. Թօմայեան, Սերաստացի Միքայէլ Էֆ. Աւետիսեան և Սերաստացի Կոզմոս Էֆ. Մէսիայեան հայազգիք։

— Յունաց Պաղքըլի հիւանդանոցին մէջ գործուած զեղծումները յանձնաժողովոյ մը ձեռամբ քննուած լինելով, միջոցներ ձեռք պիտի առնուին արգիւտելու համար այն զեղծումներ որք կը գործուին սոյն հիւանդանոցին և ուրիշ ազգային հաստատութեանց մէջ։ Թանցաւորք անմիջապէս պիտի ձամբուին և ներքին կանոնագիր մը պիտի պատրաստուի՝ իւրաքանչիւր պաշտօնէի պարտականութիւնը որոշող, որպէս զի չը կրկնուին այս օրինակ դէպքեր։

— Եանեայի նահանգին մէջ անդորրութիւնն ու ապահովութիւնը անխախտ պահելու համար 14 աշտարակաց կառուցման ձեռնարկուած է։

— Անգլիական դեսպանատան Ա. Թարգման Սըր Ա. Սանտիսընի միջոցաւ ի Բրիտանիոյ Պուրնու հաստատուելի չիւլլեքօյի գործարանին կառուցման համար երկու միլիոն ֆրանք դրամագլխով ընկերութիւն մը կազմուած է։

— Մարզուանու Էյրի Եիւք գիւղացի Զէրքէս գաղթական Թաօֆան Մէհմէտ, որ աւագակութեան համար իրրեւ ոճրագործ ամբաստանուած և ժամանակէ մը ի վեր փախըտական կը չրջէր, Քէօրրիւ գաւառակին մէջ ձերբակալուել է։

— Սելանիկէն Սրաւսուլի կը գրեն թէ յունիս 6/18 հինգշաբթի օր անգլիական հրատարակ Պ. Քարրիլ գործի մը պատճառաւ կոտորով դէպ ի վտանգաւ ձախայ ելեր, և

յետ միջօրէի սպաննուած գտնուել է Թօրսէնի և Ամաթուլլի կայարանաց միջև երկաթուղոյ գծին մօտ։ Եաթալանով մը կոկորդէն երկու վէրքեր առած և գլխուն մէջ գընտակ մ'ընդունած էր։

— Որթալուիճի ջնջման վրայ խորհրդակցելու համար յանձնաժողով մը կազմուած է Առևտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան մէջ։

— Եէտի-Գուլէի կերպարի գործարանն սկսեր է արտադրել վաքէր անուամբ ծանօթ տեսակի մ'անոլոր մանած, որ խիստ յարգի է։

— Ֆրանսական ընկերութիւն մը արտօնութիւն խնդրած է կազմել լուսաւորելու Գատըգիւղ, Բուսիւտար և Վոսիւրի տախկան եւերաց միւս գիւղերը։

— Առևտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան պաշտօնատան հարաւային կողմը՝ երկրագործական Դրամատան համար քարուկիր չէնք մը պիտի շինուի, 600 քառակուսի կանգուն գետնի վրայ, 4000 ոսկի ծախքով։

— Կայս. պալատան քիմիագէտ Պոնկոփսքի պէյ մենաջնորհ խնդրած է Նիկոմիդիոյ գաւառին մէջ գտնուած հանքային ջրոյ մը, որ կը նմանի վալս կոչուած հանքային ջրոյն։

— Կարինէն կը գրեն առ Թաւրիզ թէ նահանգին ամէն կողմը տիրող անդորրութեան ու ապահովութեան, ինչպէս և Կուսակալ Հասան Սայրի փաշայի ջանքով ձեռք բերուած վարչական գործոց կանոնաւորութեան համար, տեղւոյն ընկի և օտարազգի բնակիչք իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն ու բարեմաղթութիւններ կ'ընեն վան կենաց վեհ. Սուլթանին։ Դ. զօրաբանակին հրամատար Զէքի փաշա կ'ըսուի չ'ենթարկէ հեծեալքնդոց կազմակերպութեամբ։

— Մաղնիսայի կառավարական պաշտօնատան հրդեհի պահուն մարդահամարի տոււարներն ևս այրած լինելով, որոշուած է նոր մարդահամար ընել 10 հազար դրուշ ծախքով և 10ի չափ պաշտօնէից միջոցաւ։

— Արտօնութիւն խնդրուած է Գապաթալի նաւամատուցին մօտ ուրիշ նաւամատուց մը շինել և հոն հանել գաւառներէն մայրաքաղաքս բերուած ոչխարները։ Նոր նաւամատուցը պիտի ունենայ նաեւ փարախներ ի հարկին ոչխարները պատասպարելու համար։ Խնդրարկուն կ'առաջարկէ տարեկան 1500 ոսկի վճարել Բաղաքապետութեան և ասոր փոխարէն ոչխարի տէրերէն 40 փարայի տուրք մ'առնել իւրաքանչիւր ոչխարի համար։

— Պէրութէն ի Դամասկոս չոգեշարժ թըրամուէյի գիծ մը շինելու համար մենաջնորհ ստացած է Հասան Պիհէմ Էֆէնտի։

— Բաղաքային պաշտօնէից կանոնագրոյն ճրդ յօդուածին համաձայն, կուսակալներու և վերատեսուչներու արգիւտած է իրենց ազգականաց պաշտօն տալ իրենց կուսակալութեան նահանգին կամ վերատեսուչութեան չըրջանակին մէջ։ Օրինաց այս տրամադրութիւն Բէթիլի պաշտօնէից համար ևս գործադրելի լինելով, ծանուցուած է ամէն կողմ, որպէս զի խախտ գործադրութեան հոգ տարուի։

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ			
Օսմ. լիւան 100 դրշ. էն			
Մէքիսիէ	107 38	Վէջնոց	403
Գաւորք մէքիս	107 25	Բուսիւր քօլ	89 40
Մանր մէքիս	103 30	Նարալէն	87 4
Մէթալիք	101	Գրիմիք	51 45
Պէշիկ	102 30	Սիւք. լիւան	409 30
Մանէթ թղթադրամ 8 45			
Գանալիտէ (երեկոյ.)	20 10	Բուս. երկ. բաժին	744/4
Թահվիլ. Օսմ. 4 օլ	79 20	Թաղալիք	49 20

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՄԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Իսկի-Ջաթաթէ փողոց. քիմ 64